

## **ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՕՐՀՆԵՐԳՈՒՆԵՐ**

Հայ քրիստոնեական օրհներգությունը (շարականագրությունը) 420–430-ական թվականներին սկզբնավորել են Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը՝ մեր առաջին բանաստեղծ-երգահանները։ Նրանք են դրել օրհներգերի ծիսական ժողովածովի՝ Կցուրդարանի (ապագա Ծարակնոցի) հիմքերը։ Մաշտոցը ստեղծել է Մեծ Պահքի (Պահոց կամ Ապաշխարության) կարգի օրհներգերը, իսկ Սահակ Պարթևը՝ Մեծ Պահքին հաջորդող Ղազարի հարությանը, Ծաղկազարդին և Ավագ (Մեծի) Ծաբաթվանը ձոնված երգերը<sup>1</sup>։

Այնուհետև օրհներգությամբ զբաղվել է Մեսրոպի և Սահակի կրտսեր աշակերտներից լավագույնը՝ Մովսես Խորենացին։ Նա, մեր համոզմամբ, այդ ասպարեզում հանդես է եկել 460–470-ական թվականներին, երբ հայոց կաթողիկոսի գահին էր Գյուտ Արամեացին (Վախճ. 478): Վերջինս ևս Սահակ-Մեսրոպյան կրտսեր աշակերտներից էր, Խորենացու ուսումնակիցը («աշակերտակից Մովսեսի»), ևաս գաղափարակիցը՝ իրու հունամետ ազգային գործիչ։ Արամեացին իր հանճարեղ ուսումնակիցին ըստ ամենայն նովանավորել է, պաշտպանել ասորամետ կղերականների հարձակումներից և իր կաթողիկոսության երկրորդ տարու արդեն (շուրջ 462 թվականին) նրան ձեռնադրել է Բագրևանդի և Արշարունիքի միացյալ թեմի առաջնորդ։

Վարդանանց պատերազմին հաջորդած խոռվահուզ տարիներին որոշակիորեն խաթարվել էին Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հաստատած կարգերն ու ավանդույթները թե՛ ժամակարգության և թե՛ դավանաբանության ու դպրության ասպարեզ-

<sup>1</sup>Տե՛ս Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Օրհներգեր, «Սարգիս Խաչենց», «ՓՐԻՆԹԻՆՖՈ», Երևան, 2010:

Անրում: Ուստի և, հայրենանվեր կաթողիկոսը վերականգնելու համար նախկին ավանդույթները, գործի լծեց ժամանակի բոլոր կարող ուժերին: Նա Հովհան Մանղակումի եպիսկոպոսի (հետագայում՝ կաթողիկոս) հետ բարեկարգեց Մեսրոպ Մաշտոցի և Սահմակ Պարթևի ստեղծած ժամագիրքը: Նրա հանձնարարությամբ Դավիթ Անհայթը գրեց իր ճշանավոր Ներբողյանն ընդում Անստորականության և ի պաշտպանություն ուղղափառ դավանանքի (միաբնակության): Եվ, չենք կասկածում, որ Արահեղացին է հորդորել Խորենացուն գրել օրինակութեր՝ շարունակելու և ամբողջացնելու համար այդ ասպարեզում մեծ ուսուցչապետների սկսած և կիսատ թողած գործը, այն է՝ հայկական Սաղմոսարանի հետևորդյամբ ու համանմանությամբ ստեղծել ազգային կցուրդ-օրինակությամբ՝ կցուրդարանը<sup>2</sup>...

Մինչև Խորենացուն անցնելը անհրաժեշտ ենք համարում նշել, որ Գյուտ Արահեղացին ինքը իր բարեկարգած ժամագրքում սահմանել է Արևագալի կանոնը<sup>3</sup>: Ըստ առաջին անգամ մեր առաջ քաշած վարկածի, Արևագալի կանոնում առկա են եղել Արահեղացու հեղինակած չորս երգեր, որոնցից երկուար հետագայում Ներսես Շնորհալին փոխարինել է իր հորինած երգերով՝ պահպանելով Արահեղացու երկու հեղինակությունները<sup>4</sup>: Այդ երգերը ժամագրքից մուտք են գործել Շարակնոց: Արահեղացին է հեղինակել առաջին և չորրորդ երգերը («Յարեւելից մինչ ի

<sup>2</sup> Այս եգոր մտացածին չէ. ինչպես գրում է Ն. Թահմիզյանը. «Հայկական միջնադարյան երաժշտա-ծիսական մատյաններից մեկը կցուրդառան է կոչվել (կամ «Գիրք կցուրդից») և մեզ է հասել չափազանց հազվագյուտ օրինակներով: Խոկ Շարական, Շարակնոց խոսքերը XII դարում են ընդհանրացել» (Ն. Թահմիզյան. Բարսեղ Ծննդ և մասնագիտացված երգաստեղության ծաղկումը Հայաստանում VII դարում, «Բանքեր Երևանի համապարանի», 1973, թիվ 1, էջ 213):

<sup>3</sup> Տե՛ս «Ժամագրիք Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1903, էջ 477–503: Տե՛ս նաև Մ. Քեշիշեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմադի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 73: Յ. Տաշեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 516, 689: Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Երևան, 1985, էջ 22:

<sup>4</sup> Շարակնոցային ցանկերում Արևագալի բոլոր երգերի հեղինակ է Անդրկալացված Ներսես Շնորհալին (տե՛ս «Շարական հոգևոր երգոց», Կ. Պոլիս, 1853, էջ 9: Հ. Անսազան, Հայկական մատենագիտություն, Խո. Ա. Երևան, 1959, էջ LXVI–LXVIII):

մուտս» և «Ծանապարի եւ ճշմարտութիւն»), որոնք հին կցուրդ-երգերի և մուշեր են:

Օրիներգության ասպարեզում, սակայն, մեծ ուսուցչապետներից հետո, հաջորդ խոշոր հեղինակը Մովսես Խորենացին է: Ծարականցներում նա հիշատակված է նաև Մովսէս Քերթող ամունով: Քերթող բառն իր բուն իմաստով նշանակում է «կերտող ուսանաւոր եւ չափաբերական բանից. տաղաչափ. բանաստեղծ. պուէտ. է սեպհականեալ անուն Հոմերոսի առ յոյնս, եւ առ մեզ՝ Մովսէսի Խորենացւոյ»<sup>5</sup>:

Մովսես Խորենացին մեր գիտակցության մեջ ավելի շատ (եթե ոչ՝ բացառապես) դրոշմված է իբրև պատմագիր: Եվ դա, բնական է, քանի որ նա հիրավի մեր խոշորագույն պատմիչն է, Պատմահայրը: Սակայն մինչև պատմագրությամբ գրադարձը նա եղել է քերթող-բանաստեղծ-երգահան և թողել է չափազանց հարուստ բանաստեղծական ժառանգություն: Այս է պատճառը, որ նա կոչվել է նաև Քերթողահայր, որ նշանակում է «հայր եւ գլուխ քերթողաց»<sup>6</sup>: Դեռևս Ղ. Ալիշանն է նկատել, որ Խորենացին Քերթողահայր է կոչվել «աւելի բանաստեղծական կամ երգահան գրուածոց համար. եւ թէ այս մտքով այս անուանս արժանաւոր է»<sup>7</sup>:

Ասենք նաև, որ Սահմակ-Մեսրոպյան դպրոցում ուսումնառելիս Խորենացին խորացել է նաև երգեցողության մեջ: Այնուհետև «Ալեքսանդրիայում ևս ըստ ամենայնի կարևորել է պաշտոներգության և նույնիսկ ավելի լայն՝ ընդհանրապես երգ-երաժշտության, հին ու նոր երգերի հարաբերության, ազգային լեզուներին կապված հոգևոր երաժշտության և այլ կենսական երևոյթների հետ առնչվող հիմնական հարցերը»<sup>8</sup>: Ահա թե ինչո՞ւ, պատահական չէ, որ ժամանակի կաթողիկոսը հատկապես նրան է հանձնարարել շարունակելու ուսուցչապետների գործը օրիներգության ասպարեզում:

<sup>5</sup> «Բառգիրք հայկագեան լեզուի», հտ. 2, Կ.Պոլիս, 1846, էջ 919:

<sup>6</sup> Նոյն տեղում: Ծիշտ չէ այն բացատրությունը, թե Քերթողահայր պատվանունը «Բիմնված է «Պատմութիւն Հայոց» դարակազմիկ աշխատության վրա»: (*Սուլր Մովսես Խորենացի*, Աստվածաբանական երկեր, Էջմիածին, 2007, էջ 5): Առավել ամընդունելի են Պատմահորը և Քերթողահորը առանձին ամենին ներկայացնելու փորձները:

<sup>7</sup> Ղ. Ալիշան, Մովսէս Քերթողահայր Հայոց, Բազմավէպ», 1849, էջ 51:

<sup>8</sup> Ն. Թամմիշանամ, Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադար-յան երգարվեստը, «Էջմիածին», 1979, Ե, էջ 26:

Խորենացին, ըստ իրեն հանձնարարված ծրագրի, հորինել է Մեծ Պահքին նախորդող և Ավագ Ծաբաթվան հաջորդող գրեթե բոլոր նշանակալից նկեղեցական տոներին վերաբերող օրհնեարգերը:

Նա է հեղինակել Քրիստոսի Ծնունդին և Հայտնության ի հաշպես նաև այդ մեծ տոնին առնչվող Ծրագալուցին և Տյառնընդառաջին նվիրված երգերը: Այդ են վկայում շարականների հեղինակների ցանկերը. «Սուրբ Մովսէս Քերթող՝ զԾրագալուցի... զկարգ ԾԱնդեան... զՏեառնընդառաջին»<sup>9</sup>:

Ծարականների հեղինակներին քաջածանոթ գրիչները ևս ԾԱնդյան օրհներգերի հեղինակին «կոչում են Մովսէս Քերթող կամ Մովսէս Խորենացի, Քերթողն ու Խորենացին միևնույն անձն համարելով», ինչպես օրինակ, «զԾԱնդեան» Մովսէս Քերթողն ասաց», «Մովսէս Քերթողն» զԾԱնդեան»<sup>10</sup>:

13-րդ դարի խոշոր մատենագիր Վարդան Վարդապետը (Արևելցի) ԾԱնդյան օրհներգերը վերագրել է թե՛ Խորենացուն և թե՛ 7-րդ դարի երաժիշտ-տեսաբան Բարսեղ Շոնին. «Զի թե՛ մեր թարգմանիչն եւ հոգեշարժ վարդապետ Մովսէս Խորենացին ասացեալ է զԾԱնդեան եւ զՅարութեան երգս շարականաց, եւ թե՛ մեծն եւ հանդիսաւոր Ծգնաւորն Բարսեղ, մականուամբ Շոնն կոչեցեալ»<sup>11</sup>:

Մեր համոզմամբ, ԾԱնդյան օրհներգերի հիմնական մասը հեղինակել է Մովսէս Խորենացին, իսկ Բարսեղ Շոնը (թերևս նաև այլ հեղինակներ) ընդամենը կատարել է որոշ հավելումներ<sup>12</sup>:

<sup>9</sup> «Ծարական», Էջ Ա: Ծարականների հեղինակների ցանկերը և նրանց վերաբերող միջնադարյան այլ տեքստեր հրատարակել է Հ. Անապանը (տե՛ս «Հայկական մատենագիտություն»), Խո. Ա., Էջ LXV-LXVII):

<sup>10</sup> U. Ամասուլիս, Հին և նոր պարականոն կամ անվակեր շարականներ, Վաղարշապատ, 1911, Էջ 8: U. Ամասուլիսին այստեղ անվերապահորեն ընդունել է, որ «Մովսէսն է գրել ԾԱնդեան կարգը»:

<sup>11</sup> Վարդան Վարդապետ, Տեսութիւն Անթառամ ծաղիկ Մեծացուցէին, Երուսալեմ, 1834, Էջ 6:

<sup>12</sup> ԾԱնդյան որոշ կարգերում հետագայում ընդգրկվել են նաև այնպիսի երգեր, որոնք դարձել են պարականոն (տե՛ս U. Ամասուլիս, Նշված աշխատ., Էջ 4, 8-10): Ի դեպ, Ծարականոցում եղել է նաև ԾԱնդյան ութերրորդ օրվան նվիրված առանձին կանոն («կանոն տնօրենութեան եւ անուանադրութեան Տեառն»), որը հեղինակել է Գրիգոր Անավարզեցին (տե՛ս «Բազմավեպ», 1894, յոնաւար, Էջ 10-11): U. Ամասուլիս, Նշված աշխատ., Էջ 4-7): Ըստ Դ. Ալիշանի Անավարզեցին շարականներ է գրել նաև Քրիստոսի Հայտնու-

Սրանով են բացատրվում Ծննդյան օրիներգերում առկա որոշ լեզվատական և կառուցվածքային շեղումները...

Ծարականների հեղինակային խնդրով լրջորեն գրադաժ երաժշտագետ Ն. Թահմիզյանի եզրահանգմամբ, Խորենացուն են պատկանում «Աստվածահայտնության Շրագալուցի», Տյառնընդառաջի... կանոնների բոլոր երգերը... Ծննդյան ութ օրերի կանոնների երգերի սովոր բազմությունը (ընդգծումները մերն են, - Հ.Բ.)»<sup>13</sup>:

Խորենացին, որ հեղինակել է Սուրբ Ծննդի և հարակից Շրագալուցի և Տյառնընդառաջի կարգերը, պիտի անհրաժեշտաբար անդրադարձ լիներ նաև Աստվածածնի Ավետմանը: Եվ այդպես էլ եղել է: Ինչպես ապացուցել է Ս. Ամատունին, Քերթողահայրը ստեղծել է նաև Ավետման (Աւետեաց) նախնական կարգը: Այստեղ նա ընդգրկել է չորս երգեր՝ մեկական Հարցն, Մեծացուցել, Ողորմեա և Տէր յերկնից: Ամատունին հինք է ունեցել 17-րդ դարի սկզբի Ծարակնոց, որտեղ առկա է եղել այդ հին կարգը, և որի գրիչը վկայել է. «ԶԱւետեաց Պատկերն եւս Մովկէս Խորենացին է ասացեալ»<sup>14</sup>: Այնուհետև (12-րդ դարում) Գրիգոր Փոքը Վկայասերը ստեղծել է Ավետման նոր կանոն (պատկեր) վերացնելով նախկինը<sup>15</sup>: Ըստ այդմ, Խորենացու հեղինակած Հարցնը դարձել է պարականոն, իսկ հաջորդ երեք երգերն ընդգրկվել են Հարության Մեծացուցեմերի շարքում...

Կասկած չկա, որ Քերթողահայրն անհրաժեշտաբար պիտի անդրադարձ քրիստոնեական մեծագույն տոնին՝ Հարությանը: Հիրավի, ըստ շարակնոցային ցանկերի և այլ տվյալների, նա

թյան և մկրտության ճրագալուցի, ինչպես նաև Ծննդյան և Հայտնության առաջին երեք օրերի առթիվ (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վեճետիկ 1885, էջ 242):

<sup>13</sup> Ն. Թահմիզյան, Ներսես Ծնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 19: Ընդունելի չեն Խորենացու երգերի վերաբերյալ Գ. Հակոբյանի կատարած հաշվարկներն ու վերագրումները (տե՛ս Գ. Հակոբյան, Ծարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երևան, 1980, էջ 88):

<sup>14</sup> Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 3:

<sup>15</sup> Գ. Հակոբյանն, ծանոթ լինելով համերեք Ս. Ամատունու աշխատությանը, Խորենացուն է վերագրել Գրիգոր Վկայասերի հեղինակած Ավետյաց կարգի, ինչպես նաև Աստվածածնի ծննդյան կարգի Հակոբ Կրաքեցու հեղինակած շարականները (տե՛ս Գ. Հակոբյան, Նշված աշխատ., էջ 88-89):

հեղինակել է ութ շարք կազմող Հարության Հարցմերը. «Սուրբն Մովսէս Քերթող... զՅարութեան Հարցսն»<sup>16</sup>:

Տեսանք, որ Վարդան Վարդապետը ինչպես Ծննդյան, այնպես էլ Հարության երգերը վերագրել է թե՛ Խորենացուն և թե՛ Բարսեղ Ծոնին: Հարության Հարցմերը վերագրվել են նաև Անահիա Ծիրակացուն<sup>17</sup>: Սակայն այս անգամ էլ պիտի ընդունել, որ 7-րդ դարի այդ երկու հեղինակները Հարության Հարցմերում թերևս կատարել են միայն որոշ հավելումներ: Հավելողների մեջ անշուշտ եղել են նաև այլ հեղինակներ<sup>18</sup>:

Հիմնականում Խորենացին է հեղինակել նաև վերոհիշյալ Հարության Մեծացուցէները. «Սուրբն Մովսէս Քերթող՝ ... զՄեծացուցէքն»<sup>19</sup>:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մի փոքր ավելի ուշ Ստեփանոս Սյունեցին (Ա) ստեղծել է Հարության Օրհնությունները, իսկ Հովհանն Մանդակումին՝ Ծաշու երգերը (Գովեաներ): Ըստ այսմ, Ուկեղարում արդեն կազմվել է Հարության ամբողջական կարգը (Օրհնութիւններ, Հարցմեր՝ իրենց կազմով, Մեծացուցէներ և Ծաշուներ): Դա իր ծավալով խոշորագույն օրհներգային

<sup>16</sup> «Ծարական», էջ Ա: Ըստ Գ. Ավետիքյանի, «Զկարգ շարականաց Յառութեան ըստ ութ ձայնից բազումք (ընդգծումը մերն է – Հ. Բ.) ընծայեն Մովսէսի Խորենացոյ» (Գ. Անեսիքնամ, Բացատրութիւն շարականաց, Վեճետիկ, 1814, էջ 284):

<sup>17</sup> Տե՛ս Ս. Ամասունի, Նշված աշխատ., էջ 100: Ն. Թահմիզյանը ևս Ծիրակացուն է վերագրել Հարության Հարցմերի մեծ մասը՝ ընդունելով, որ Խորենացին հեղինակել է «Հարության երգեր» (տե՛ս Ն. Թահմիզյան, Ներսես Ծնորհալին, էջ 19: Նովա, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը, էջ 163, և հուն.): Հարության Հարցմերի մեջ են եղել են երգեր, որոնք դարձել են պարականոն (տե՛ս Ս. Ամասունի, Նշված աշխատ., էջ 101–102):

<sup>18</sup> Ն. Թահմիզյանը ենթադրությամբ, Հարության Հարցմերի ութերորդ շարքի «Փառք Քրիստոսի ամենազօր Յարութեանն» սկսվածքով Տեր յերկնիցը հեղինակել է Գրիգոր Նարեկացին (տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 82–88: Այս կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս Գրիգոր Փիտէնես, Գրիգոր Նարեկացի շարականագի՞ր, Էջմիածին, 1999):

<sup>19</sup> «Ծարական», էջ Ա: Տե՛ս նաև Ս. Ամասունի, Նշված աշխատ., էջ 8: Ն. Թահմիզյանը հավանական է համարել, որ Հարության Մեծացուցէների հիմնական մասը հեղինակել է Բարսեղ Ծոնը (տե՛ս Ն. Թահմիզյան, Ներսես Ծնորհալին, էջ 19: Տե՛ս նաև «Բանքեր Երևանի համալսարան», 1973, թիվ 1): Պահպանվել են նաև Հարության մի շարք պարականոն Մեծացուցէներ, որոնց մեծ մասն անանուն է (տե՛ս Ս. Ամասունի, Նշված աշխատ., էջ 11–17): Դրանց մի քանիսի հեղինակը թերևս Խորենացին է...»

կարգն է, ինչը միանգամայն բնական է՝ նկատի ունենալով այդ մեծագույն տոմի խորհուրդը: Սակայն 12-րդ դարում (ինչպես Ավետիման կարգի պարագայում) ստեղծվել է Հարության մի նոր, առանձին կարգ («Կանոն Սրբոյ Զատկին», հեղինակ՝ Ներսես Լամբրոնացի), և ճախճական կարգի չորս մասերը հայտնվել են Ծարականոցի տարբեր հատվածներում...

Հստ որոշ վկայությունների, Խորենացին է հեղինակել նաև Հոգեգալստյան (Պետէկոստէի), Վարդավառի և Աստվածածնի Վերափոխման առաջին օրերի կարգերը: «Սուրբն Մովսէս Քերթող՝... եւ զառաջին պատկերն Հոգու գալստեան, զՎարդավառի եւ զՎերափոխման»<sup>20</sup>: «Կանովն Պետէկոստէին Առաջին աւուրս... ասացեալ Մովսէսի Քերթող վեհին»: «Մովսէս Քերթողն՝... զՎարդավառին»: «Փոխման Աստուածածնին ասացեալ Մովսէսի Քերթող Խորենացի»<sup>21</sup>: Այդ կարգերը վերագրվել են նաև Հովհան Մանդակունուն և Անանիա Շիրակացուն<sup>22</sup>: Մեր կարծիքով, այդ կարգերի հեղինակը ևս Խորենացին է: Որպես լրացուցիչ կովան կարող ենք համարել այն հանգամանքը, որ Քերթողահայրը գրել է նաև Մարիամ Աստվածածնի Վերափոխմանը և Վարդավառի խորհուրդին նվիրված այլ երկեր<sup>23</sup>:

Ծարականցային ցանկերում Խորենացուն և Շիրակացուն են վերագրված Հովհաննես Մկրտչին («զՅոհաննուն») նվիրված օրհնելոգերը: Գ. Ավետիքյանը որոշ տվյալների հիման վրա Հովհաննես Մկրտչի գլխատման կարգը համարել է «արարեալ ի Մովսիսի Խորենացույ»<sup>24</sup>:

<sup>20</sup> «Ծարական», էջ Ա:

<sup>21</sup> Ս. Ամասումին, Նշված աշխատ., էջ 105, 117–118:

<sup>22</sup> Հստ Ն. Թամիզյանի, Խորենացին է հեղինակել Աստվածածնի Վերափոխման առաջին օրվա բրոյր երգերը, իսկ Վարդավառի և Հոգեգալստյան առաջին օրերի երգերը նաև վերագրել է Անանիա Շիրակացուն (Ն. Թամիզյան, Ներսես Շնորհալին, էջ 19: Նոյն, Գրիգոր Նարեկացին, էջ 163 և համայնք):

<sup>23</sup> Տե՛ս Մովսէսի Խորենացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1865, էջ 281–296, 326–338:

<sup>24</sup> Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 289: Տե՛ս նաև Ն. Թամիզյան, Ներսես Շնորհալին, էջ 19: Խորենացուն են վերագրվել նաև Հովհաննես Մկրտչի նշխարժերի տոմին, ինչպես նաև Համօրէն Առաքելոց, Մարգարէից և Վարդապետաց (Թարգմանչաց) տոմերին նվիրված երգերը: Դրանց մեծ մասի հեղինակը, սակայն, Հովհան Մանդակունին է: Խորենացուն է վերագրվել նաև Հայրապետաց կարգը (տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 568): Սակայն այդ կարգի հեղինակը Ներսես Շնորհալին է:

Ծարակնոցային ցանկերը Խորենացուն և Ծիրակացուն են վերագրել նաև Անտոն Անապատականին, Թեոդոս թագավորին (Սուրբ թագավորաց) և Գրիգոր Լուսավորչին նվիրված կարգերը<sup>25</sup>: Գ. Ավետիքյանի ունեցած տվյալներով այդ կարգերը վերագրվում են հիմնականում Խորենացուն, մասամբ՝ Հովհան Մանդակունուն<sup>26</sup>:

Համամիտ ենք Ն. Թահիմիզյանին, որ Խորենացին է գրել «Անտոն Անապատականին նվիրված կանոնի կտորները (բացի Օրինության Բ պատկերից՝ «Որ ի հանդէս քո ճգնութեան»), Թագավորաց կանոնի կտորները (բացի Օրինությունից՝ «Որ զերկնաւոր թագաւորութեանոյ») և Գրիգոր Լուսավորչին նվիրված կանոնի հին երգերը («Ով երշանիկ տէր»):<sup>27</sup>

Խորենացին ըստ Էռլիյան իրագործել է իր մեծ ծրագիրը՝ շարունակելով և գրեթե լիովին ամբողջացնելով իր ուսուցչապետների սկսած գործը: Նա ստեղծել է ժամանակի հայ եկեղեցու սահմանած նշանակալից տոներին նվիրված օրիներգերի կարգերը: Դրանք, անշուշտ, հետագայում համալրվել են այլ հեղինակների երգերով, որոշ օրիներգեր պարականոն են դարձել: Խորենացու ստեղծած կարգերն ընդգրկում են շուրջ 300 երգեր, որոնց մեծ մասի հեղինակն է նա: Ուստի և Պատմահայրն ըստ արժանվույն կրել է նաև Քերթողահայր պատվանունը:

\* \* \*

Քրիստոսի Ծնունդին ձոնված օրիներգերը ստեղծելիս Մովսես Խորենացին, բնականաբար, հիմք է ընդունել Ավետարանը: Նա հարկ է համարել նախ անդրադառնալ Աստվածածնի Ավետոմանը, որը մեր եկեղեցին տոնում է Քրիստոսի Ծնունդից ինը ամիս

<sup>25</sup> «Ծարական», Էջ Ա: Պահապանվել են Անտոն Անապատականին և Գրիգոր Լուսավորչին ձոնված պարականոն շարականներ, որոնք չեն պատկանում Խորենացու գրչին (տե՛ս Ա. Ամասունի, Նշված աշխատ., Էջ 18–19, 72–80): Ծարակնոցային ցանկերում Խորենացուն և Ծիրակացուն են վերագրված նաև Առաքելոց, Մարգարէից և Վարդապետաց նվիրված օրիներգերը, որոնց հիմնական մասի հեղինակը Հովհան Մանդակունին է:

<sup>26</sup> Տե՛ս Գ. Աւետիքյան, Բացատրութիւն, Էջ 110, 115, 42:

<sup>27</sup> Ն. Թահիմիզյան, Ներսես Շնորհալին, Էջ 19:

առաջ՝ ապրիլի 7-ին: Այդ օրն է, երբ, ըստ Ավետարանի, Գաբրիել հրեշտակապետը գալիս է Գալիլիայի Նազարեթ քաղաքը և Դավթի սերնդից Հովսեփի նշանածին՝ կույս Մարիամին, ավետուս է նրա՝ Սուրբ Հոգուց հիշանալու և Աստվածորդուն ծնելու մասին (տե՛ս Ղոկաս, Ա, 26–28):

Ավետման (Աւետեաց) տոնի առթիվ Խորենացին, ինչպես նշեցնք, կազմել է մի ոչ ծավալուն կարգ, որի Հարցնը սկսվում է հրեշտակապետի՝ Մարիամին ուղղված ավետիսով…

Այստեղ անհրաժեշտ է նշել մի կարևոր հանգամանքը: Մարիամն իրեն Աստվածամայր և Սրբուհի պաշտոնապես ճանաչվել է 431 թվականի Եփեսոսի երրորդ ժողովում. դրանից հետո է մեր իրականության մեջ տարածվել նրա պաշտամունքը, և մեր եկեղեցական ծիսակարգի մեջ մտել են Աստվածածնին նվիրված տոնները: Ուստի և զարմանալի չէ, որ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, որոնք օրիներգեր են հեղինակել նախքան Մարիամի պաշտամունքի տարածումը Հայաստանում, չեն անդրադարձել Աստվածամորը՝ որպես տոնելի և պաշտելի Սրբուհու<sup>28</sup>:

*Մովսես Խորենացին առաջինն է Հայոց մեջ օրիներգել Սուրբ Կույսին՝ սկզբնավորելով հայ մարիամներգությունը:*

Ասենք նաև, որ իր Պատմության մեջ Խորենացին առանձնակի անդրադարձել է Եփեսոսի ժողովին՝ գումարված ընդդեմ «ամրարիշտն» Նեստորի: Պատմիշը նշել է, որ այդ ժողովին չեն մասնակցել Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, որոնց հասուն առաքվել են ժողովի սահմանած կանոնները<sup>29</sup>:

Այն ժամանակ, երբ Խորենացին հորինում էր իր օրիներգերը, Անստորականությունը լայնորեն թափանցել էր Հայաստան՝ մերժելով Մարիամի՝ Աստվածածնին և խաչի՝ աստվածային լինելը: Ի հակադինցություն այդ հերձվածողական քարոզների՝ Խորենացին իր օրիներգերում չափազանց շատ փառաբանել ու ներքողել է թե՛ Աստվածածնին և թե՛ Միածին Քրիստոսի Սուրբ Խաչը (այստեղ, անշուշտ, որոշակի դեր է ունեցել նրա հովանավոր Գյուտ Արարեգացին):

<sup>28</sup> Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին վերագրվող այն կանոնիկ և պարականոն օրիներգերը, որ Մարիամը հիշատակված է իրեն Սրբուհի, անտարակոյս, ավելի ուշ շրջանում ստեղծված գործեր են:

<sup>29</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Տփիլիս, 1913, էջ 342–343:

Ինչպես իր օրիներգերում, այնպես էլ իր Պատմության մեջ Խորենացին, Եփեսովի ժողովի ոգով, Աստվածածնին կոչել է Ամենասուրբ<sup>30</sup>:

Նշեցինք, որ Խորենացին հեղինակել է նաև Աստվածածնի Վերափոխման առնչվող մի երկ։ Դա Սահմակ Արծրունուն գրած նրա Թուղթն է<sup>31</sup>, որտեղ պատմվում է այն մասին, թե ինչպես փայտի վրա դրոշմված Սուրբ Կույսի պատկերը նրա վերափոխումից հետո բերվեց Հայաստան։ Այստեղ էլ Ամենասուրբ Մարիամին Խորենացին կոչել է Ամէճօրմնայալ Սրբութի, այև «Սուրբ անարատ Կոյս»<sup>32</sup>։

Սակայն վերադառնանք Խորենացու օրիներգերին, ավելի կոնկրետ՝ Ավետման կարգին։ Այստեղ պարականոն դարձած Հարցնին հաջորդել է մի Մեծացուացէ։ Մեր օրիներգության մեջ այս երգատեսակը սկզբնապես կցորդվել է Աստվածածնի «Մեծացուացէ» անձն իմ զՏէր» ավետարանական օրինությանը (Ղուկաս, Ա, 46), որն ընդգրկվել է հայկական Սաղմոսարանում։ Մեծացուացէները հիմնականում նվիրված են Տիրամորք։ Ըստ այս, Ավետման նախնական կարգի Մեծացուացէն, ըստ երևոյթին, այդ երգատեսակի առաջին Ամուշը է։

Նշեցինք նաև, որ Խորենացին հեղինակել է Մեծացուացէների մի ամբողջ շարք՝ գրված Տիրոջ Հարության առթիվ։ Նա բազմաթիվ Մեծացուացէներ և Տիրամորք ձննված այլ ժանրի օրիներգեր է հորինել նաև իր հեղինակած մյուս կարգերի, հատկապես Աստվածածնի կարգերի համար։ Այդ օրիներգերում Ամենասուրբ և Ամենօրմնայալ Աստվածամայրը ներկայացված է զանազան Աերբողական-փառաբանական մակդիրներով։ Օրիներգուն նրա մեջ նախ առանձնացրել է երեք խորհուրդներ։

*Երիս խորհուրդս սուլալի ի Քեզ տեսանի, Աստուածածի՛Շ,  
յղութի՛Շ անսերմնական, ծընո՛ւնդ անարատ,  
կուսութի՛Շ՝ յնտ ծընընդեան մնալով անապական...*

<sup>30</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 342։

<sup>31</sup> Քննական բնագիրը՝ «Պատմութիւն Սրբության Աստուածածնի եւ պատկերի նորա» Խորագրով, հրատարակել է Թամար Տասնապետյանը (Անթիլիսս, 1994)։

<sup>32</sup> Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 292–293։

Ըստ այսմ, մակդիրների ու փոխաբերությունների մի մասը մատնամշում է Սուրբ Կույսի անարատությունը՝ բնորոշելով նրան իբրև «Կուտութեանց Պարծանք», «Անխախտելի Կուտութիւն», «Անհարսնացեալ», «Հարսն երկնաւոր», «Հարսն անփորձ», «Գանձ անապական», «Մաքոր Աղաւմի»...

Անապական Կույսը կանանց մեջ միակ օրինյալն է, բոլորի համար երանելի, «Պարծանք՝ ազգի մարդկան», «Պարծանք եկեղեցւոյ»: Նրան օրինում, գոհաբանում և փառավորում են ոչ միայն մարդիկ, այլև «վերին զօրութիւնը, դասք անմարմնոց, հոգեղինաց, հրեղինաց, զուարթոնց և հրեշտակաց»: Նա ինքը հողեղեն սերովք է, «ամեղիցն ամանեալ հրեղինաց դասուցն», «քան զերկինս բարձրագոյն», «գերահրաշ Ծաղիկ՝ բուրեալ լեղեմայ հոտ անմահութեան», «խորհուրդ կենաց», «Մայր կենդանութեան», «ճանապարհ արքայութեան»...

Այս հողեղենն կինը սրբացվել ու գերբնական արարածի հատկանիշներ է ձեռք բերել, քանի որ նրան է շնորհվել կրելու մեծագույն խորհուրդը՝ Աստծո մարդեղացումը: Հրեշտակապետը նրան կոչել է Բերկրեալ (շնորհընկալ), քանի որ նրա մեջ է Սուրբ Հոգու միջոցով մարմնավորվել Տերը: Ուստի և Տիրամորը տրված մակդիրների ու փոխաբերությունների մեծ մասը խորհրդանշում է նրա այդ մեծ առաքելությունը՝ լինել մարդեղացած Աստծո կրողը և ծնողը. «կենարար Բանի Բնակարան», «Բնակ հրեղէն Աստուածութեան», «քերովբէական Այթոռ», «Վերընկալ աստուածային Բանի», «Հիմն եկեղեցւոյ», «Աստուծոյ լուսեղէն Տաճար», «Խորան Հոգիոյն Սրբոյ», «Տեղի անտանելի Լուսոյն», «հրափայլ Ծագման Առագագատ», «Աղբիր անապատ Լուսոյն», «ճշմարիտ Արեւելք Արեգականն արդարութեան»<sup>33:</sup>

Լինելով Լուս-Աստծուն կրողն ու ծագեցնողը՝ Տիրամայրն ինքը ևս լուսեղեն էակ է՝ «քան զարեգակն պայծառագոյն», «պայծառ Երկինք», «Ամայ լուսեղէն», «Որպես գերարփի փայլեալ»...

Տիրամայրն ամենից ավելի գովերգված է վսեմ տաճարի փոխաբերությամբ, որ անարատ է, անխախտելի, լուսեղեն: Երգերից մեկում դիմելով Բան Աստծո Տաճար-Մարիամին՝ բանաստեղծն ասել է.

<sup>33</sup> Այս փոխաբերությունը գտնում ենք նաև Խորենացու վերոհիշյալ Թղթում (տե՛ս Մովսէս Խորենացի, Մատնագրութիւնը, էջ 285):

Խորանայարկ, կամարանըման յօրինեցար, Սուրբ Կոյս  
Աստուածածի՛ւ,  
զանհասամելի ըգբանն Աստուած քնաւորապէս, անսերմնաբար  
կրեցեր ի Քո որովալմէ.  
անդադար երգով ըգբեզ միշտ մեծացուցանեմք:

Ինչպես Քրիստոսն իր մահով փրկեց մարդկությունը նախա-  
հայր Աղամին տրված Աստծո անեծքից, նույնական և Մարիամն իր  
Աստվածածնությամբ վերացրեց նախամայր Եվայի մեղքը, դար-  
ձավ «Բարձող անհծից» և «Լուծիչ Երկանց» (Երկունքի ցավերը  
շնչող): Դիմելով նրան՝ օրիներգուն ասել է.

Քեւ լուծան կմիջ դատապարտութեան,  
եւ Քեւ կագնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ...

Այսպիսով, Քրիստոսի մայրը ծեռք է բերել նաև որոշ աստվա-  
ծային-սրբային հատկանիշներ՝ դառնալով «Քաւիչ մեղաց», «Քաշ-  
խող բարութեանց», «Բոլորից փրկութեան Մայր», «Օգնական եւ  
Շնորհ աշխարհի», «Աղրիլ ծարաւեաց», «Հանգիստ աշխատե-  
լոց»... Նա այդպիսին է, անշուշտ, Տիրո՞շ կամքով, ուստի և հա-  
վատացյալի կողմից առավելապես ընկալվել ու բնորոշվել է իբրև  
Աստծո առաջ բարեխոսող, «Միշնորդ օրինաց եւ շնորհաց»,  
«Բարեխոս աշխարհի»...

Խորենացու օրիներգերում Աստվածածինը գովերգված է նաև  
Հին կտակարանից մակարերված մի շարք խորիրդանշական փո-  
խաբերություններով. Երկնային Դուռ, որով կարող է անցնել  
միայն Աստված, անկեզ Մորենի, Լուսի այուն, Վիմածին Լեռ,  
փակված Աղբյուր, Գեղմ, հովանի Ամպ... Այս խորիրդանշները  
պարզաբանվում են մարգարեական գրքերի մեկնություններով,  
որոնց քաջածանոթ է եղել Խորենացին:

Այսպիսով, Մովսես Խորենացու օրիներգերում ներկայացված  
է Աստվածածնի առինքնող լուսեղեն կերպարը: Դրա շնորհիվ  
նրա սկզբնավորած մարիամերգությունը մեծ խիզախում ու նորա-  
րարություն էր և վաղ միջնադարի լուսերգության բանատեղծա-  
կան փայլուն դրաւորում: Պիտի անցներ կես հազարամյակ, որ-  
պեսզի սրբացված-աստվածացված Մարիամը Գրիգոր Նարե-

կացու քերթության մեջ վերստին դառնար հողեղեն կին, կանացի գեղեցկությամբ երկրային արարած, որի աչքերն են «ծով ծիծառախիտ... բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր... Ծոցն լուսափայլ՝ կարմիր վարդով լցեալ»...

\* \* \*

Հայ եկեղեցին Աստվածահայտնության Ծրագալուցը նշում է հունվարի 5-ին, Սուրբ Ծնունդի նախօրյակին: Այդ ծիսակատարությունը «առ հինան կատարիր մօտ ի մութն երեկոյին լուցմամբ ճրագաց»<sup>34</sup>: Այս հանդիսության համար Խորենացին հարկ է համարել ստեղծել առանձին երգաշարք, որն անմիջապես շարունակում է Ավետման երգաշարքը և վերջինիս հետ միասին նախերգանքի դեր կատարում բուն Աստվածահայտնությանը նվիրված օրիներգության համար:

Ծրագալուցի կարգը ևս արծարծում է Աստվածածնի Ավետման և Քրիստոսի մարդելացման թեման: Հետևաբար այստեղ գերակշռում է Աստվածամոր և նրա մեջ մարմնացած Աստծո փառաբանությունը, որ ողողված է ծագող արդար Արեգակի ոգեղեն լուսով.

*Ծագումըն հրաշալի, որ անյատ էր ի մէաջ,  
եւ Բամբա՛ Հայրակա՞մ՝ ազըմքընելի,  
հուր փալլակնացեալ եւ ի մարմ՞նի բնակեցաւ՝  
անվընաս պահելով զարարածս ամենայն:*

Խորենացին ուժ կարգերով օրիներգել է մարդեղացած Քրիստոսի Ծնունդը՝ բանաստեղծորեն մշակելով համապատասխան ավետարանական պուժեն: Հիսուսը ծնվում է Բեթղեհեմում, և նրան խանձարուրով բարուրած դնում են մսուրի մեջ: Նրան առաջինը տեսնում և երկրագում են հովիվները: Ապա ուղեցուց աստղին հետևելով՝ գալիս են մոգերը և երկրագում նրան:

Նշանավոր է և ժողովրդի մեջ լայնորեն տարածված է

<sup>34</sup> Գ. Աւետիքեռամ, Բացատրութիւն, Էջ 44:

Մնայան Առաջին օրվա Օրհնությունը, «որ երգվում է ոչ միայն եկեղեցում, այլև տներում, համդեսմերում և մանավաճան՝ Ծննդյան Ավետիսաների ժամանակ: Այս շարականի մասապականացման ու շատ սիրվելու գաղտնիքը պարզության, գեղեցկության ու մատչելիության մեջ է»<sup>35</sup>: Ահա առաջին երկտող տունը.

*Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ,  
հովիդ երգեն ընձ հրեշտակս, տաճ աւետիս աշխարհի:*

Արծարծվող պուտեհին զուգընթաց դարձյալ շոշափվում է Աստվածածնի Ավետման թեման, և կատարվում է վերշինիս ու նրա մարմնացյալ Որդու փառաբանությունը, ինչպես.

*Ի Հօրէ ծագեցար՝ լուսաւորել զարարածը,  
արդարութեան՝ Արեգակը, Տէ՛ր, փա՛ռը Քեզ:*

*Ծընար ի յայրին, ընծալեցաւ Բեթղեհէմէմ,  
արդարութեան՝ Արեգակը, Տէ՛ր, փա՛ռը Քեզ:*

*Հովուաց յայտնեցար, Երկրպագեանդ ի մոգուց,  
արդարութեան՝ Արեգակը, Տէ՛ր, փա՛ռը Քեզ:*

*Եւ մե՛ք երգեսցուք, որ ի Կուսէն մարմնացար,  
արդարութեան՝ Արեգակը, Տէ՛ր, փա՛ռը Քեզ:*

Աստվածահայտնության հետ միաժամանակ մեր եկեղեցին տոնում է նաև Քրիստոսի մկրտությունը (Զրորհնեք): Հովհաննես Մկրտչի ձեռքով երեսնամյա Քրիստոսը մկրտվում է Հորդանան գետում. «Եւ ահա բացան նմա երկինք, եւ ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իշանէր իբրեւ զաղաւնի եւ գալը ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ» (Մատթէոս, Գ, 16): Այս իրողությանը Խորենացին անդրադառնում է Աստվածահայտնության կարգերում: Նրա բնորոշմամբ, Քրիստոսը մկրտվելով Հորդանանում, «լուաց ըզմեղ աշխարհի», «սրբեաց զՅորդանան».

<sup>35</sup> Գ. Հակոբյան, Նշված աշխատ., Էջ 89:

Մըկրտիք Քրիստոս, եւ սըրբին ամենայն արարածք,  
եւ տայ մեզ թողովթիւն մեղաց՝  
շրով եւ Հոգով վերասրբելով ըգմեզ:

Հովհաննես Մկրտիչը՝

Տեսանելով Սուրբ գՀոգին՝ աղաւակերպ ի վերայ ջուրցըն,  
աղաղակէր՝ ասելով. «Ահա Գտան Աստուծոյ, որ ի Հօրէ  
վրկայեցաւ.

– Դա է Որդի իմ սիրելի, ըմա որում Ես հաճեցալ»:

Աստվածահայտնության կարգերում առկա են օրիներգերի բոլոր տեսակները, ինչի շնորհիվ «կոտրվել է» հարասվող պատումի միակերպությունը: Ընդհանուր առմամբ, այդ կարգերում տիրապետում է զվարթ լուսով ողողված ավետիսան-ցնծագին տրամադրությունը, քանզի ծննյան և կնունքի տոն է, այն էլ՝ Լուս-Աստծո Ծնունդի և Մկրտության.

Ցըմծովենամբ տօմնացուք ըգԾըմունդ Քո Սուրբ,  
որ յայտնեցար մեզ՝ Լոյս ի Լուսոյ  
եւ լուսով Քո լրցեր զտիեզերըս,  
ըգՔեզ օրինեմք, Աստուած հարցըն մերոց...

Մըկրտեալ ի Յորդանան ի Յովհանէ,  
աստուածային բնութեամբ, մարմնովըն, զոր ի մէնջն էտ՝  
ըգմեզ լուսաւորելով աստուածային ծագմամբըն:

Եթե Ավետման և Շրագալուցի երգերը համարում ենք Աստվածահայտնության ոլթ օրերի օրիներգության նախերգանքները, ապա վերջերգ կարող ենք համարել Տյառնընդառաջի կարգը: Ըստ Ավետարանի, քառասնօրյա Հիսուսին, «Ըստ օրինացն Մովկսիսի», տանում են Երուսաղեմի տաճար՝ «յանդիման առնել Տեառն»: Այստեղից էլ՝ մեր եկեղեցում փետրվարի 14-ին նշվող Տյառնընդառաջ տոնի անվանումը: Տաճարում մանուկ Հիսուսին իր գիրկն է առնում Սիմեոն ծերունին՝ մարգարեանալով, որ մանուկը կլինի «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց եւ փառս ժողովրդեան Խարապէլի» (Ղուկաս, Բ, 22–32):

Այս է Խորենացու հեղինակած Տյառնընդառաջի կարգի ճյութը, որի շարադրանքը երբեմն վերածվել է բանաստեղծական գեղեցիկ տողերի, ինչպես.

*Այսօր երկիրս երկիմք անուանեցաւ,  
զի Տէրըն տէրանց իշեալ յերկնից ի յերկիր  
եւ ընծայիլ յանձն առնու ի գործոց ձեռաց հիրոց:*

Տյառնընդառաջի օրիներգերում գծագրված է Սիմեոն ծերունու կենդանի մարդկային կերպարը: Նա, որին Սուլը Հոգուց հրամայված էր մահ չտեսնել, մինչև չտեսնի Տիրոց Օծյալին, այժմ վերջապես հասել է իր բաղձալի նապատակին և կարող է հանգիստ մեռնել: Նա գգվում է մանկան՝ փառավորելով Աստծուն: «Խայտար ալէօքն ծերունին», որին օրիներգուն կոչում է քերովբեալկան աթռո (ինչպես կոչել է Աստվածածնին), քանի որ նրա գրկում է բազմել մարմնացած Աստվածորդին:

Այսպիսով, Աստվածահայտնության երգերում պաշտվող սրբությանը զուգընթաց պատկերվում է նաև մարդ արարածը. մի դեպքում ի դեմս Կուլս Մարիամի, մեկ այլ դեպքում՝ Սիմեոն ծերունու: Մյուսը ինքը՝ օրիներգուն է իր հույզերով ու խոհերով, որ օրիներգում է՝ հաճախ հանդես գալով պաշտող համայնքի մենք-ի մեջ, երբեմն նաև իր իսկ անձով.

*Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց...  
փըրկել ըզմեզ ի փորձութեալէ...*

*Այսօր ըզմեղօր դատապարտեալ անձն իմ ի մահ  
մորդեա՛ ի կեամսըդ յախտեմից մարդասիրապէս...*

*Այսօր հայցմամբ ծերունոյց արձակեա՛ եւ զիս՝ ըզբազմամեղըս,  
ի կապանաց մահու՛ ի կեամսըդ յախտեմից:*

Օրիներգուի անձի, որպես «քնարական հերոսի» նման դրսւուրումներն արդեն առկա են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի օրիներգերում...

\* \* \*

Նշեցինք, որ Խորենացին օրհներգեր է հորինել նաև քրիստոնեական մեծագույն տոնի՝ Հարության կամ Սուլբ Զատկի առթիվ՝ ստեղծելով ուժ շարքերից բաղկացած Հարցներ և առանձին շարք կազմող Մեծացուցէւեր:

Հարության Հարցները Խորենացին սկսել է այն ավետարանական դրվագներից, որոնցով ավարտվում են Սահման Պարթևի հեղինակած Ավագ Շարաթվա կարգերը: Նկատի ունենք Քրիստոսի խաչելության, մահվան և թաղման դրվագները: Այնուհետև օրհներգուն արծարծել է հիմնական թեման՝ Քրիստոսի Հարությունը:

Քրիստոսի թաղման հաջորդ օրն առավոտ կանուխ Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը և Սողոմոն գնում են անուշաբույր լուսերով ու խմկով օծելու Աստվածորդու մարմինը: Սակայն ժայռափոր գերեզմանը թափուր են գտնում, և հրեշտակն ավետում է նրանց Քրիստոսի Հարությունը: Հրեշտակի տեսիլթից սարսափահար են լինում գերեզմանը հսկող զինվորները: Ցուղաբեր կանայք հրեշտակի կամքով ավետիսը հաղորդում են առաջանարին: Վերջիններիս երևում է հարություն առած Քրիստոսը, որն այնուհետև համբարձվում է երկինք... Այս է Հարության պյուծեն, իսկ դրանից բխող գաղափարը հետևյալն է. Քրիստոսն իր մահով հաղթում է մահին (*«մահուամբըն ըզմահ խափանեաց»*), կործանում է դժոխքը, առաջին մեղքի պատճառով մահացածներին կննդանացնում է և անմահություն շնորհում մարդկությանը: Այսինքն՝ կատարվում է աշխարհի երկրորդ արաշագործությունը:

Նշված պյուծեն ու գաղափարը բազում ձևերով շարադրված են Խորենացու Հարության Հարցներում վերածվելով սրտառուչ երգ-երաժշտության:

Ինչպես Քրիստոսի Ծննդյան կարգերը, այնպես էլ Հարությանը ձննված այս ութամաս շարքերը, ընդհանուր առմամբ, համակված են ցնծագին տրամադրությամբ: Կամովին մեծ տառապանքների ու մահվան գնացած Տերը հարություն է առել և դրանով անմահություն պարգևել մահկանացու մարդկանց.

Այսօր ցընծան մանկունք առաջաստի,  
քանզի Քրիստոս յարուցեալ՝ փարատնաց ըզուու  
եւ ըզտըրտութիւն  
եւ լուսաւորեաց զաշխարհըս...

Ասօր ցընծան Երուսաղէմըն Վերին,  
պատօր ցընծան Սիօն Մայր Եկեղեցի,  
քանզի Փըրկիչըն մեր յարեաւ եւ աւերեաց զդժոխս,  
եւ մեզ վերըստին Լոյսըն ծագեալ ի Հօրէ:

Ինչպես տեսնում ենք, համբնիրանուր ցնծությունն այս անգամ  
ել ողողված է ոգեղեն լուսով, քանզի Լուս-Աստված՝

Միածինըն՝ որպէս փալլակըն,  
եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհն,  
եւ երկինք եւ երկիրը ցընծալին:

Քրիստոսը իր Հարությամբ վերացնում է նախահայր Ադամի  
մեղքը, նորոգում է հին մարդկությունը, որի առջև բացում է անմա-  
հության դուռը: Օրիներգուն հակադրել է մահաբեր իմացության  
ծառ և կենարար խաչափայտը.

Պատրաճօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն,  
իսկ Յարութեամբ Միածնիդ ըզգեցաք զամմահութիւն.  
փա՛ռք Յարութեան Քո, Տէ՛ր:

Խարաճօք փայտին ճաշակեցաք ըզման,  
իսկ փայտէն կենաց նորոգեցաք ամենայն.  
փա՛ռք Յարութեան Քո, Տէ՛ր:

Հարության պյուժեն և գաղափարն արծարծելիս, օրիներգուն  
այս անգամ ևս թե՛ ներողական-փառաբանական խոսքեր է ասել  
և թե՛ հեղեղ իր ապաշխարական զեղումները, երբեմն՝ անձնական  
մակարդակով և հաճախ՝ բանաստեղծական շերմ շնչով: Ահա  
երկու հատված Ողորմեաներից, որ արտահայտում են նաև մար-  
դու ազատության ու անմահության տենչերը.

Որ տղրտմանադորդ Քո չարչարանօք խաչիճ  
ազատեցեր ըզմարդն ի տղրտմազգեաց փալսուէ՛  
եւ ի մեղսաճաշակ պղտոյն՛,  
Քրիստո՞ս Աստուած, եւ մե՛զ ողորմեա...

Ի խաչիճ բենեղեար, Աստուած,  
եւ զմարդն ի կապաճաց մահու արձակեցեր.  
եւ զիս մի՛ անտես առներ,  
որ մեղօքս եմ մեռնալ:

Մ'աշտոցի հետևությամբ, որ հեղինակել է Հարության համար  
սահմանված քառասնօրյա Պահքի ութաշարք Հարցներ, Խորենա-  
ցին ստեղծել է Հարությանը նվիրված համանման շարքեր, որոնք  
նախատեսվել են երգվելու մինչև Հոգեգալուստն ընկած հիսնօր-  
յակում (Հինանց օրերին):

Հարությանը նվիրված Մեծացուցակների շարքի երգերին մենք  
որոշ չափով անդրադարձանք Խորենացու մարիամերգությունը  
դիտարկելիս: Ավելացնենք այստեղ, որ այդ շարքը ևս գրված է  
ըստ ութ ձայնեղանակների: Սակայն, ըստ այդմ ստեղծված երգե-  
րի քանակը հավասարաչափ չէ, ինչը թերևս հետագա միջամտու-  
թյունների արդյունք է... Ասենք նաև, որ շարքում առկա է մի  
Մեծացուցէ, որը հեղինակը, ավանդութիւն շեղվելով, նվիրել է ոչ  
թե Աստվածամորը, այլ Աստվածորդուն: Բերենք այդ օրիներգը,  
որ բավական գեղեցիկ քերթված է.

Մեծացուցամենք ըգՔեզ,  
որ ի Հօրէ Բանդ եւ անճառելի Ծընունդ,  
որ ի Կուսէն մարմնացար, ցուցար մեզ:

Մեծացուցամենք ըգՔեզ,  
որ կոյսեցեր ըզման աստուածապէս  
եւ լուծեր ըզկրնիք մահու,  
որ ի խաչիճ բարձրացար կամաւ Հօր:

Մեծացուցամենք ըգՔեզ,  
որ թաղեցար ի նոր գերեզմանի  
եւ յերրորդ աւոր յարեար,  
որ ի յերկիճս համբարձար փառօք Հօր:

\* \* \*

Ասացինք, որ Խորենացին հեղինակել է նաև Հոգեգալստյան, Վարդավառի և Աստվածածին Վերափոխման առաջին օրերի կարգերը. այդ տոները 5-րդ դարում նշվել են առանց օրերի ստորաբաժանման, ինչը կատարվել է ավելի ուշ՝ Ներսես Շնորհալի կաթողիկոսի սահմանած կարգով: Վերջինս էլ հենց հեղինակել է այդ տոների հաջորդ օրերին նվիրված օրիներգերը...

Հոգեգալուստը մեր եկեղեցին նշում է Հարությունից հիսուն օր անց: Այդ ժամանակ, ըստ Նոր կտակարանի, Սուրբ Հոգին Վերնատանն է իշել առաքյալների վրա և նրանց տվել քրիստոնեությունն աշխարհով մեկ քարոզելու մարդարեական շնորհը (տե՛ս Գործք առաքելոց, Բ, 1-36): Այս պումբն բանաստեղծորեն մշակել է Խորենացին: Նա Սուրբ Հոգուն ներկայացրել է «աննիթական Աղաւնի» փոխարերությամբ, որի շնորհիվ

*առաքեալքն արբեցան ամմահական բաժակալքն  
եւ հրալիրեցին զերկիրս ի յերկինս:*

Տոնական ցնծագին տրամադրությամբ է համակված ողջ կարգը: Նշենք նաև, որ այս կարգի Մեծացուստըն ևս, ավանդույթից շեղվելով, օրիներգում է ոչ թե Աստվածածին, այլ Սուրբ Հոգուն: Սա միանգամայն հասկանալի է. քանի որ կարգի բոլոր երգերը վերաբերում են Սուրբ Հոգու գալստյանը, ուստի թեմայից անհարկի շեղում կիխեր, եթեն երգերից մեկը ձոնվեր Տիրամորը: Ավելորդ չենք համարում բերել այդ Մեծացուստըն, որը թերևս, կարգի ամենագեղեցիկ երգն է.

*Այսօր, Առ' ժողովուրդը,  
ըղնձացէ՛ք ընդ գալուստ Հոգույն Սըրբոյ՝  
մեծացուցանելով զԵլողն ի Հօրէ:*

*Այսօր ցընձան առաքեալքը՝  
զարդարեալք ի շնորհաց Հոգույն Սըրբոյ՝  
մեծացուցանելով զԵլողն ի Հօրէ:*

*Այսօր գուարճացան արարածը  
ճշշմարիս գալքստեամբ Հոգով Ալրբոյ՝  
մեծացուցանելով զԵլողն ի Հօրէ:*

Վարդավառի կամ Քրիստոսի Այլակերպության տոնը հայ եկեղեցին Աշում է Հարությունից 98 օր անց, որ համբակնում է Հոգեգալստյանը հաջորդող յոթերորդ կիրակիին: Դա այն օրն է, երբ, ըստ Ավետարանի (տես Մատթեոս, ԺԵ, 1–13) Քրիստոսը մի բարձր լեռան վրա, որ ավանդաբար համարվում է Գալիլիայի Թափրո լեռը, իր երեք աշակերտների՝ Պետրոսի, Հակոբի և Հովհաննեսի առջև այլակերպվել է (Կերպարանափոխվել): Նրա դեմքը փայլել է արևի նման, և նրա զգեստները դարձել են սպիտակ, ինչպես լուսը: Ասպա իշել է մի լուսեղեն ամպ, որտեղից հնչել է Հայր Աստծո ձայնը. «Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցալ, դժմա՛ լուարութ»:

Այս հրաշքի առթիվ հայ եկեղեցու սահմանած տոնի խորհուրդը քննել է Մովսես Խորենացին «Յաղագու Վարդավառի խորհրդոյ» մեկնաբանական երկում<sup>36</sup>: Ի դեպ, նա պստեղ Այլակերպությունը կոչել է նաև Պայծառակերպություն<sup>37</sup>, որ ընդունվել է մեր եկեղեցու եզրաբանության մեջ:

Խորենացին Վարդավառի տոնի առթիվ ստեղծել է նաև օրիներգերի առանձին կարգ, որն ըստ ամենալավի հոգեմարազատ է նրա վերոնիշյալ երկին: Այդ երկում հեղինակը Վարդավառի մասին ասել է, թե «Արդարեւ սա է օր ցնծութեան եւ ուրախութեան, զոր արար Տէր. սա է օր ծագման մեծի փառացն Աստուծոյ, որ է նոր արքայութեան սկիզբն եւ տեսչութիւն էական լուսոյն եւ Ակարագրի յուսոյն յախտենից»<sup>38</sup>: Ըստ այսմ, ինչպես նախորդ՝ Հոգեգալստյան, այնպես էլ Վարդավառի տոնի առթիվ նրա ստեղծած օրիներգերը ողողված են ցնծությամբ, ոգեղեն լուսով ու հովսով.

*Որ բգնառագայթ փառաց Քոց ցուցեր,  
արեգակնակերպ փայլմամբ զարարածը լուսաւորեցեր,  
զՔնեց փառաւորենմբ, իմանալի Լոյս...*

<sup>36</sup> Տես Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 326–338:

<sup>37</sup> Տես նույն տեղում, էջ 328–329:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 329:

Լերինք ցընծացեն առաջի Քո, Տէ՛ր,  
որ երևեցար ի փառ Աստուծոյ Հօր...

Այս կարգում էլ կա մի Մեծացուացէ, որը նվիրված է Աստվածածնին և առնչվում է Վարդավառի տոնին: Հեղինակն այստեղ կատարել է երկու ուշագրավ հակադրություն: Եթե Պայծառակերպության ժամանակ առաքյալներն ահաբեկվում են Տիրոց մասնավոր (մասնակի) լուսի ճառագայթումից, ապա Աստվածածնը կրել է իր մեջ «բռվանդակ զգիոր Աստուածութեանը»: Եթե Պայծառակերպության ժամանակ առաքյալներին հովանին լինում լուսեղեն ամպը, ապա Աստվածածնին հովանավորել են Գերագուն Սուրբ Հոգին և Բարձրյալի զորությունը:

Աստվածածնին է ձննված նաև Վարդավառի կարգի Ծաշուն, որը դարձյալ սկսվում է ցնծագին ավետիսով.

*Ուրախացի՛ր, Պըսակ կուսից Տիրամա՛յր,  
պսօք Որդին Քո զՀայրենին փայլեաց զփառու.  
Նըսն յաւէժ յա՛նձն արա զամաշինս մեր:*

Չինեին Վարդավառին ձննված խորենացիական օրիներգերը, թերևս չեր ծնվի Նարեկացու շենշող «Տաղ Վարդավառին»...

Վարդավառից հետո 5-րդ կիրակի օրը մեր եկեղեցին նշում է Աստվածածնի Վերափոխման տոնը: Տիրամոր՝ հոգով ու մարմառով երկինք վերափոխվելու պատմությունը «ունիմք ի գրուածոց ինձ Ռիոնեսիոսի Արիսպագացոյ առ Տիտոս, այլև Նիկողեմոսի»<sup>39</sup>: Վերափոխմանն անդրադարձել է նաև Խորենացին իր վերոհիշյալ Թղթում: Բացի այդ, նա հեղինակել է նաև Վերափոխմանը նվիրված օրիներգերի նախնական կարգը:

Ինչպես Աստվածորդու Հարությունը, այնպես էլ Աստվածամոր Վերափոխումը, որ նույնպես հարություն է մահից երեք օր անց, ցնծությամբ են ընդունել երկրայինները և երկնայինները: Ուստի և այս տոնն էլ ուրախառիթ է և ցնծագին.

<sup>39</sup> Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 484: Այս առթիվ տես նաև Թամար Տասմապետեան, Մարիամ Աստուածամայր, Անթիլիաս, 1991, էջ 149-152:

Տօնելով ըզլիշատակ Կուսի՝ Աստուածորդոյ Մօր,  
հրբանոյին հրեշտակք ի յարկին,  
եւ ցընծան դասք առաքելոց եւ մարգարէից  
ընդ կուսական տօնը.  
ողորմեա՛ մեզ, Աստուած:

Ըստ Վերափոխման պատմության, Քրիստոսը «բազմութեամբ երկնային զօրաց» իշնում և մասնակցում է Մօր հուղարկավորությանը, ապա քերովբեական կառօպվ տեղափոխում է ճրան երկինք: Չափազանց գեղեցիկ են կարգի Տէր յերկնիցի հետևյալ տողերը.

Մարգարտատեսիլ եւ ծիրանազգեաց հրաշափառագոյն Կոյս,  
զոր առեալ Որդոյ, վերափոխեալ՝ դասեաց  
յանպատում ի կեան...

\* \* \*

Խորենացին օրհններգեր է հեղինակել ոչ միայն եկեղեցական խոշոր տոների առթիվ, այլև առանձնակի օրհններգել է որոշ նշանավոր սրբերի, որոնք 5-րդ դարում արդեն տոնելի են եղել հայ եկեղեցում: Բնականաբար, նա անդրադարձել է աստվածաշնչան մեծագույն սուրբ Հովհաննես Մկրտիչ Սուրբ Կարապետին՝ օրհներգերի մի շարք նվիրելով ճրա նահատակության հիշատակին: Հայ եկեղեցին այդ տոնը նշում է Հարության յոթերորդ օրը:

Օրհներգուն բանաստեղծորեն շարադրել է Հովհաննես Մկրտչի գլխատման ավետարանական պատմությունը (տե՛ս *Մատթէոս*, ԺԴ, 1–12, *Մարկոս*, Զ, 14–29): Ասենք նաև, որ Հովհաննես Մկրտչի նահատակության պատմությանը Խորենացին անդրադարձել է նաև իր «Պատմութիւն Հայոց»ում, որտեղ մի ավանդության հիման վրա տեղեկացրել է, թե Հովհաննես Մկրտչի վրեժը լուծելու համար Հերովդեսի դեմ մղված պատերազմին մասնակցել են նաև Հայոց քաջերը<sup>40</sup>:

<sup>40</sup> Տե՛ս *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Էջ 258:

Հովհաննես Մկրտիչը Խորենացու օրիներգերում ներկայացված է իրեւ «առաել քան զմարգարէս», քանի որ ոչ միայն կանխագուշակել է Քրիստոս-Մեսիայի գալուստը, այլև մկրտել է ճրան և հարթել նրա ճանապարհը.

*Ծըշմարիտ մարգարէ եւ ձեռնադրող Որդույն Աստուծոյ,  
յառաջընթաց Կարապէտ եւ պատմող աստուածային օրինացըն  
հորդէր ճանապարհը Թագաւորին յախտեմից:*

Ինչպես Մարիամ Աստվածածինը, այնպես էլ այս և մյուս սրբերն ընկալվել են իրեւ միջնորդ և բարեխոս՝ Աստծոն և մարդու միջև: Ուստի և, դիմելով Հովհաննես Մկրտչին, Խորենացին հայցում է.

*Որք հնաւատով զգիշատակը քո տօնեմք  
եւ անդադար ձայնի զքեզ ունիմք բարեխոս.  
աղաչեա՝ զԱստուած հարցըն մերոց:*

Բոլոր հին քրիստոնեական եկեղեցիները իրենց տոնելի սրբերի շարքին են դասել նաև եգիպտական միայնակյաց Անտոն Անապատականին (Թերապեցի, 251–356): Աթանաս Աղեքսանդրացին գրել է նրա վարքը, որն արդեն 5-րդ դարում հունարենից թարգմանվել է հայերեն<sup>41</sup>: Ծգնավորության հիմնադիր այս համաքրիստոնեական սրբին Խորենացին, անշուշտ, չեր կարող անտեսել և նրա տոնին նվիրել է օրիներգերի մի շարք:

Ներբողելով ու փառաբանելով Անտոն Անապատականին, օրիներգուն ճրան նմանեցրել է Եղիա մարգարեին ու Հովհաննես Մկրտչին և ներկայացրել այսպիսի գեղեցիկ բնույթագրումներով. «անմարմնական վարք պայծառացեալ ի մարմնի», «դուռըն մշտից կենաց ճանապարհին», «պարծանք եկեղեցւոյ եւ ուրախութիւն հիեշտակաց», «բաժակ հոգեւորական՝ լըցեալ աստուածային ուրախութեամբ»....

Ինչպես սրբախոսական երկերում, այնպես էլ սրբերին նվիրված օրիներգերում, պաշտվող սուրբը հանդես է բերվում գեր-

<sup>41</sup> Տե՛ս «Վարք սրբոց», Բա. Ա, Վենետիկ, 1855, էջ 17–80:

մարդկային, գերբնական հատկանիշներով։ Այդպիսին է նաև Խորենացու օրիներգած Անտոն Անապատականը։

Որ գերազանցեալ գրտար առաւել քան ըզբընութիւն մարդկան...  
աղօթանուէր թեոքըն հալածեաց ըզբազմութիւն լեգէոն  
գորացըն...

Այս կարգում էլ ներբողանքին ու փառաբանությանը զուգակցված է օրիներգուի աղերսանքը, որով նա դիմել է Աստծո և մարդու միջնորդ ու բարեխոս սրբին...

5-րդ դարից ի վեր հայ եկեղեցին նշում է նաև համաքրիստոնեական մեկ այլ սրբի՝ Թեոդոս թագավորի տոնը։ Խոսքը Բյուզանդիայի կայսր Թեոդոսիոս Մեծի մասին է, որը գահակալել է 379–395 թվականներին և եղել է ոչ միայն հմուտ գորավար, այլև չերմեռան քրիստոնյա։ «Նա իր մեծ և նեղինակավոր ուժով, իր կայսերական հրամաններով վերահաստատեց եկեղեցու մեջ այն դավանաբանությունը, որ կոչվում էր ուղղափառ (օրթոդոքս) և ձևակերպված էր Նիկիայի տիեզերական ժողովի մեջ... Թե որքան բարձր էր գնահատվում Թեոդոսի եկեղեցական գործունեությունը, երևում է նրանից, որ եկեղեցին, ինչպես նաև հայոց, սուրբերի դասը կարգեց նրան»<sup>42</sup>։

Ինչպես տեղեկացնում է Գ. Ավետիքյանը, Թեոդոս թագավորի կյանքի ու գործի մասին «գոյ տեսանել կարգաւ ի նորատիպ Վարս Սրբոց. հատ. Ապայից. (Երես 103), որը եւ արձանականն Սրբոյ Ամբրոսիոսի յերշանիկ փոխումն նորա ի դաս սրբոց»<sup>43</sup>։

Խորենացին, անշուշտ, չէր կարող անտեսել նաև այս մեծագործ սրբին, ուստի և նրան ևս ձոնել է օրիներգերի մի առանձին շարք։ Իր Պատմության մեջ էլ Քերթողահայրն անդրադարձել է Թեոդոսին՝ կոչելով նրան «մեծն» և «քարեացպարտն թագաւոր», որը «քակեաց զմեհեանս կողցն մինչեւ յատակս եւ արար եկեղեցի»<sup>44</sup>։ Թեոդոսի այս արժանիքներն են գնահատված նաև օրիներգերում։

<sup>42</sup> Հեռ, Երկերի ժողովածու, հու. 1, Երևան, 1966, էջ 495։

<sup>43</sup> Գ. Աւետիքյան, Բացատրութիւն, էջ 115։

<sup>44</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 297։

*Որ հաւատով պարտեաց ըգթղշնամին  
եւ աղօթիք հիմնեցոյց Սուրբ գԵկեղեցի...*

*Որ բարեպաշտութեամբ հիմնեցոյց գԵկեղեցի Սուրբ  
եւ կարգաւորեաց ուղափառութեամբ...*

Հատկանշական է, որ կարգի Օրհնության մեջ, ի դեմս Թեոդո-  
սի, Խորենացին օրհներգել է բոլոր այն թագավորներին, որոնք  
իրենց բարեպաշտությամբ ու զորությամբ հաստատուն են պահել  
քրիստոնեական եկեղեցին.

*Որ զարդարեալ գեղապանձ վայելչութեամբ Սուրբ գԵկեղեցի՝  
պրակեցեր առաքելովք եւ մարգարեիք  
եւ հաստատեալ՝ ամրացուցեր սուրբ թագաւորօք,  
բարեպաշտութեամբ սոցա, Քրիստո՞ս, իլրայեա՞ ի մեզ:*

Այդ «սուրբ թագաւորաց» մեջ մեր օրհներգուն, անշուշտ, նկա-  
տի է ունեցել նաև Տրդատ Մեծին<sup>45</sup>, որի դերը Հայոց դարձի մեջ  
չափազանց բարձր է գնահատել նա իր «Պատմութիւն Հայոց»ում:

Եթե Խորենացու ժամանակ Տրդատ թագավորը դեռևս հայ  
եկեղեցու տոնելի սրբերի շարքում չի եղել<sup>46</sup>, ապա Գրիգոր Լուսա-  
վորիչը, բնականաբար, ի սկզբանե սրբացվել է, ըստ որում ոչ մի-  
այն հայ, այլև օտար եկեղեցիների կողմից: Լուսավորչին նվիրված  
տոներից մեկը վերաբերում է նրա վիրապից ելքին: Այդ տոնի  
առթիվ Խորենացին ստեղծել է օրհներգերի մի շարք:

Խորենացու օրհներգերը խարսխված են Լուսավորչի նշանա-  
վոր վարքի վրա, որի հիմնական աղբյուրն է Ագաթանգեղոսի  
Պատմությունը: Խորենացին քաջածանոթ է եղել այդ երկին, որի  
հիմնան վրա իր «Պատմութիւն Հայոց»ում ներկայացրել է Լուսա-

<sup>45</sup> Խորենացուն վերագրվել են Տրդատ թագավորին, ինչպես նաև Գրի-  
գոր Լուսավորչին ձոնված երգեր (տե՛ս աստ, Հավելված):

<sup>46</sup> Հետագայում Ներսես Ծնորհալին Տրդատ թագավորին նվիրել է մի  
ամբողջական կանոն, որի Օրհնությունը և Մամկուճը կանոնական Ծարակ-  
նոցում սկզբից և վերջից կցվել են Թեոդոսի կարգին, իսկ Հարցմբ,  
Ողորմեան, Տքր յերկինիցը և Ծաշուն դարձել են պարականոն (տե՛ս Ս. Ամսա-  
տումի, Նշված աշխատ., Էջ 20–21):

Վորչի կյանքը և գործը: Պատմահոր բնորոշմամբ, առաջին հայ քահանայապետը լուսավորեց «զամենայն Հայս լուսով աստուած-գիտութեան» և ջնջեց «զիսաւար կուապաշտութեանն»<sup>47</sup>: Իր օրիներգորում էլ Քերթողահայոն ասել է.

*Որ Քրիստոսամուէր կոչմամբըն ծագեցար որպէս զարեգակըն  
եւ լուսաւորեցեր բզշայաստան աշխարհս աստուածգիտութեամբ,  
տէ՛ր Սուրբ Գրիգոր, անդադար բարեխօսեա՛ վասն աճաման  
մերոց...*

*Որ նորիհա սուրբ աղօթիւք բարձեր զիսաւար կուապաշտութեան  
ի Հայաստան աշխարհէ  
եւ արարեր երկրոպագոս Ամենասուրբ Երրորդութեանընդ...*

Բաստատեցեր զիմունս եկեղեցւոյ ի Հայաստան երկրի...

Հայ օրիներգության մեջ առաջին անգամ հնչում է Հայաստան անունը, արծարծվում է «հայկական թեման», փառաբանվում է ազգային սուրբը: Այստեղ օրիներգուն Քրիստոսին կամ Սրբին դիմում է ոչ միայն առհասարակ հավատացյալ մարդու կամ մարդկության, այլև որոշակիորեն հայ մարդու, դարձի եկած հայ ժողովրդի անունից: Բանաստեղծն առավել շերմ խանդաղատանքով, հույսով ու հավատով է ապավինում իր ժողովրդի առաջնորդ հայրապետին, հոգևոր հովվին.

*Ըգբեզ ունիմք բարեխօս առ Յիսուս Միածինըն  
եւ աղաչող վասըն քո ուխտաւորացըս:*

*Կանխեա՛, խընդրեա՛ զթողութիւն յանցանաց  
ի քէն աշակերտելոցըս...*

*Որ համբերութեամբըն քո ստացար քեզ ժողովորդ  
սեպհականըս եւ ընտրեալըս...  
վասըն ժողովըրդեան քո հայցեա՛ ի Տեառնէ ըգբաւութիւն:*

<sup>47</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Էջ 242:

Եթեն մաշտոցյան որոշ օրիներգերում հայրենասիրական ոգին թաքնված է ենթատեքստերում, ապա այստեղ արդեն այն առավել բացորոշ է: Հեղինակը տենչում է փրկությունն իր «ընտրեալ ժողովրդի», որի նկատմամբ ունեցած իր անսահման սերը հետագայում պիտի առատորեն հեղեր իր անմահ Հայոց պատմության մեջ...

Մովսես Խորենացու հեղինակած բազում երգեր «ակներևաբար հղացված են նրա մեծ ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահմակ Պարթևի ստեղծագործական ավանդույթների յուրացման նշանաբանի ներքո»<sup>48</sup>:

\* \* \*

Իր ուսուցիչների նման Խորենացին էլ հորինել է հիմնականում՝ երեք, երբեմն չորս տուն կազմող ազատ ոտանավորու օրիներգեր՝<sup>49</sup> Նա ևս ձգտել է գրել հանրությանը մատչելի լեզվով, քանի որ իր խոսքն ուղղել է ամենալայն լսարանին: Սակայն լինելով ավանդույթի լավագույն շարունակող ու զարգացնող, նա ավելի շատ է կատարել բառաբարդումներ և դիմել առավել բազմազան արտահայտչամիջոցների, դրսւորելով յուրահատուկ «վսեմական ոճ»<sup>50</sup>: Նրա երգերի «մեծ մասը լեզվով, կառուցվածքով և նախնական գեղեցկությամբ աչքի ընկնող ընդհանուր ձևով, ներկայացնում է հայ հոգևոր բանաստեղծության հնագույն շերտերից մեկը»<sup>51</sup>:

Քերթողահայոց զարգացրել է հայ օրիներգության թե՛ պոետիկան և թե՛ թեմատիկան: Նա Քրիստոսի Ծնունդի, Հարության, Հոգեգալստյան, Վարդավադի առաջին օրիներգուն է Հայոց մեջ: Նա է սկզբնավորել նաև հայ մարիամերգությունը:

Սուլբ Կոլյսից զատ, նաև նաև առաջինն է բանաստեղծորեն պանծացրել որոշ նշանավոր սրբերի, այդ թվում նաև ազգային

<sup>48</sup> Ս. Թահմիջյան, Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը, «Էջմիածին», 1979, Զ, էջ 48:

<sup>49</sup> Խորենացուն վերագրված կարգերում առկա բազմասուն երգերը հետագա հավելումներ են:

<sup>50</sup> Գ. Ակներիքեան, Բացատրութիւն, էջ 110:

<sup>51</sup> «Էջմիածին», 1979, Զ, էջ 46:

սուրբ Գրիգոր Լուսավորչին՝ ստեղծելով առաջին հայ վարքագրական օրիններգերը:

Հստ ամենայնի փառաբանելով Քրիստոսին, Մովսես Խորենացին լավագույնն շարունակել է մեծ ուսուցչապետների օրիններգերից բխող լուսերգությունը, արտահայտել է իր՝ պաշտողօրիններգողի խոհերն ու հովզերը, հայրենասիրական զգացումները, հայ եկեղեցու գաղափարաբանությունը...

Խորենացու երգերը ներկայացնում են 5-րդ դարի «հայ հոգևոր երգաստեղծության բարձրագույն նվաճումները»: Դրանց որոշ նմուշներ, որոնք «կրում են իրենց մեծ հեղինակի անհատական վառ կանչը ևս, գոյացնում են 5-րդ դարի հայ հոգևոր երգաստեղծության պայծառ գագաթը»<sup>52</sup>: Հստ այս, Խորենացին մեծապես նախապատրաստել է հետագա հայ քերթությունը, հատկապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը:

Իր թողած հարուստ բանաստեղծական ժառանգությամբ Պատմահայրը, հիրավի, վեհ Քերթող է, ինչպես ասել է մեր միջնադարյան գրիչներից մեկը, և Քերթողահայր է, ինչպես ասել են հնուց ի վեր և ասում ենք մենք...

\* \* \*

Թե ճշգրտորեն ո՞ր թվականին է սկսել և ե՞րբ է ավարտել Խորենացին իր մեծաքանակ օրիններգերի հորինման աշխատանքը, չենք կարող ասել: Դա եղել է 460-ական թվականների սկզբից մինչև 470-ականների կեսերն ընկած ժամանակամիջոցին:

Դրանից հետո (թերևս նաև զուգահեռաբար) նա շարադրել է իր Պատմությունը, որն ավարտել է շուրջ 480 թվականին: Ինչպես գրում է Ն. Թահմիզյանը, Խորենացու երգերի «բազմակողմանի

<sup>52</sup> «Էշմիածին», 1979, Զ, էջ 49–50: Հետագա հավելումներ պիտի համարել նաև Խորենացու լեզվից ու ոճից զգալիորեն շեղվող երգերը: Սմենացալուն օրինակը Աստվածահայտնության հինգերորդ օրվա «Անթառան ծաղիկ» Ծաշուն է, որ լի է Խորենացուն ոչ բնորոշ այլաբանություններով ու փոխաբերություններով, որոնց մեկնաբանությանը մի ամբողջ ուսումնասիրություն է նպիրել Վարդան Վարդապետը («Տեսութիւն անթառան ծաղիկ Մեծացուցէին», Երուսաղէմ, 1834):

հետագությունը ցուց է տալիս, որ դրանք մեր Քերթողահոր երաժշտա-բանաստեղծական արվեստի հեղաշրջման նույնիսկ բազմամյա մի ճանապարհ են գծում»<sup>53</sup>:

Իր հեղինակած օրիներգերը Խորենացին, անշուշտ, հանձնել է կաթողիկոսարան՝ պատվիրատու Գյուտ Արահեղացու<sup>54</sup> կամ նրան հաջորդած Հովհան Մանդակունուն, որը գահակալել է 478–490 թվականներին: Վերջինս հատկապես իր կաթողիկոսության երկրորդ շրջանում (Վահանանց պատերազմից հետո) ըստ ամենայնի շարունակել է իր նախորդի բուռն ազգանպատ գործունեությունը: Նա վերամշակել է եկեղեցական կարգերն ու ծեսերը: Արահեղացու հետ ժամագիրքը կարգավորելուց զատ հարստացրել է նաև Պատարագամատուցը...

Արդեն ձեռքին ունենալով Խորենացու հեղինակած օրիներգերը, Հովհան Մանդակունին կարողացել է իրագործել մեծ ըստ շապետների և իր անմիջական նախորդի՝ Գյուտ Արահեղացու ծրագիրը՝ ստեղծել Կցուրդարան ժողովածուն: Այդ ծիսական մատյանը կազմելու համար անհրաժեշտ է եղել կատարել միայն որոշ համալրումներ, ինչպես նաև կանոնակարգել օրիներգերն ըստ գործող Տոնացուցի և ըստ ուր ձայնեղանակների՝ այնպես, ինչպես կազմված էր հայկական Սաղմոսարանը: Այս աշխատանքը Մանդակունին միայնակ չի արել: Այդ գործի մեջ նա ներառել է երգաբանության ասպարեզում հմտացած մեկին՝ Ստեփանոս Սյունեցուն (Ա): Շարակնոցային ցանկերում վերջինս համարվում է «յաշակերտաց անտի Սրբոց Թարգմանչաց»<sup>55</sup>: 5-րդ դարում ապրած այս գործիչը միջնադարից ի վեր հաճախ նույնացվել է 8-րդ դարում ապրած մեկ այլ Ստեփանոս Սյունեցու հետ: Այդ

<sup>53</sup> «Էջմիածն», 1979, Զ, էջ 48:

<sup>54</sup> Մի հին ավանդագրուցի հիմանական, Խորենացին Գյուտ կաթողիկոսի մոտ երգել է Աստվածահայտնության ճրագալուցի իր հորինած «սրանչելի և հրեշտականուագ» «Որ դասուց երկնաւորաց» Հարցմը (տե՛ս «Բագմավէպ», 1849, էջ 54-ի ծան.):

<sup>55</sup> «Շարական», էջ Ա: Կիրակոս Գանձակեցին Սահակ-Մեսրոպյան գլխավոր աշակերտների թվում միշտառակում է նաև Ստեփանոս Սյունեցի եպիփոնոպին (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 28): Նույն անձն է Հայսմավորքում միշտառկված Ստեփանոս Աստղմիկը (տե՛ս Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Բա. Դ, Երևան, 1948, էջ 601):

թնջուկը վերջնականապես պարզաբանել է Ն. Թահմիզյանը<sup>56</sup>: Վերջինիս եզրահանգմամբ, Ստեփանոս Սյունեցի Առաջին հիրավի եղել է «Սահմակ-ՄՇերովայն կրտսեր աշակերտներից մեկը, Սյունեցի Ստեփանոս անունով առաջին եպիսկոպոսը»<sup>57</sup>:

Ի՞նչ է արեւ Առաջին Ստեփանոս Սյունեցին: Տեսանք, որ Մովսես Խորենացին հեղինակել է Հարության Հարցները (իրենց կազմով) և Մեծացուցէները: Մեր եկեղեցու այդ մեծագույն տոնի արարողակարգի ամբողջացման համար Մանդակունին ամհրաժեշտ է համարել ունենալ նաև օրիներգերի բոլոր տեսակներով հորինված երգեր: Ուստի և նա ինքը գրել է Սուրբ Հարության Ծաշու երգերը, իսկ Ստեփանոս Սյունեցուն հաճճարարել է հորինել Հարության Օրինությունները: Այդ են վկայում շարակնոցային ցանկերը. «Ստեփանոս Սիւնեցի Առաջինն... զեօթն (ճիշտը՝ զուրն - Հ.Բ.)<sup>58</sup> ձայնն Արագ Օրինութեանց»<sup>59</sup>: Ստեփանոս Սյունեցիներին վերաբերող նշված արժեքավոր հոդվածում այս իրողությունն անառարկելիորեն ապացուցել է Ն. Թահմիզյանը: Մանդակունին, ուրեմն, Ստեփանոս Սյունեցու հետ միասին ամբողջացրել է Հարության կամ Սուրբ Զատիկի կարգը:

Բացի Հարության կարգը համարող Օրինություններից, Ստեփանոս Սյունեցին հեղինակել է նաև մի նոր կարգ՝ նվիրված բոլոր մարտիրոսներին (Համօրէն մարտիրոսաց)<sup>60</sup>: Մարտիրոսաց կարգը վերագրվել է նաև Պետրոս Գետադարձին<sup>61</sup>:

<sup>56</sup> Տե՛ս Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության Ավագ Օրինությունները, «Էջմիածին», 1973, Բ, էջ 29–43:

<sup>57</sup> «Էջմիածին», 1973, Բ, էջ 37: Մեր կարծիքով Առաջին Ստեփանոս Սյունեցին աշակերտել է նաև Մովսես Քերթող-Խորենացուն: Քանի որ երկու Ստեփանոս Սյունեցիները նույնացվել են, ուստի և Առաջին ոստիցի Մովսես Քերթողը համարվել է Երկրորդի ոստիցիշ:

<sup>58</sup> Հարության Օրինությունները ներկայացնում են ուժ շարքեր: Շարակնոցի հեղինակավին ցանկերի կազմողների տեղեկությամբ «Վատ» ձայնը (կամ ԳԿ երգաշարքը) հորինել է Ներսես Շնորհավին, ինչը, «ըստ բոլոր տվյալների», պատմական թյուրիմացության արդյունք է («Էջմիածին» 1973, Բ, էջ 32):

<sup>59</sup> «Ծարական», էջ Ա: Հ. Առաջան, Հայկական մատենագիտություն, Բաժ. Ա, էջ LXVIII:

<sup>60</sup> Տե՛ս Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց, էջ 442: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բաժ. Դ, էջ 603:

<sup>61</sup> Տե՛ս «Ծարական», էջ Բ: Հ. Առաջան, Հայկական մատենագիտություն, Բաժ. Ա, էջ LXVI–LXVIII:

Ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Ամատունին, Մարտիրոս շարականները մին են, և շատ հավանական է, որ գրած լինի Ստեփանոս Սյունեցին, քան թե Պետրոս Գետադարձը<sup>62</sup>: Վերջինս, թերևս, միայն որոշ երգեր է հավելել այս կարգում<sup>63</sup>:

Ինչպես կտեսմենք, բոլոր մարգարեներին և բոլոր առաջալներին ձոնված օրիներգեր է հեղինակել Հովհան Մանդակունին: Եվ արդեն տեսանք, որ որոշ սրբերին նվիրված վարքագրական օրիներգեր է ստեղծել Մովսես Խորենացին: Անշուշտ, հարկ է եղել ստեղծելու նաև բոլոր մարտիրոսներին նվիրված վկայաբանական կարգ, «մինչև որ տօնասէր հայերը յատուկ շարականներ» կնվիրեին որոշակիորեն այս կամ այն վկայից<sup>64</sup>:

Մարտիրոսաց կարգն, որւմն, հեղինակել է Ստեփանոս Սյունեցին, որը անառարկելի հարձալ 5-րդ դարի օրիներգուն է: Այս է հավաստում Ն. Թահմիզյանի այն կարևոր դիտարկումը, թե Մարտիրոսաց շարականները «հնագույն ծագում ունեն» և ստեղծվել են 8-րդ դարից շատ առաջ: «Ավելին, Մարտիրոսաց Հարցները կերպարապին բովանդակությամբ նույնիսկ պարզագույն են, քան ավագ Օրինությունները»<sup>65</sup>:

Գրականագիտական քննությունը ևս մեզ բերել է այն համոզման, որ Հարության Օրինությունները և Մարտիրոսաց Հարցները (հիմնական մասը) պատկանում են նույն հեղինակին, որը Առաջին Ստեփանոս Սյունեցի-Ասողյակի է:

Մենք համոզված ենք նաև հետևյալում: Ստեփանոս Սյունեցին Հովհան Մանդակունու հանձնարարությամբ կանոնակարգել է մեր առաջին ազգային ծիսական ժողովածու՝ Կցուրդարանը, որ Ծարականցի առաջին կամ նախնական տարրերակ է: Մինչև օրս

<sup>62</sup> Տես Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 176: Ամատունին (էջ 176-178) հրապարակել է Մարտիրոսաց ձոնված մի շարք պարականու երգեր, որոնց հեղինակներն անհայտ են: Այստեղ (էջ 43-46) նա հրապարակել է նաև Ներսես Շնորհալուն վերագրված «Կանոն Գեորգայ և այլոց վկայիցն» պարականոն կարգը, որը բացառապես ընդգրկում է ընդհանրապես Մարտիրոսաց ձոնված երգեր:

<sup>63</sup> Ն. Թահմիզյանն այդ կարգի հավանական հավելողներից մեկն է հիմնարեկ Երկրորդ Ստեփանոս Սյունեցուն (տես Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհային, էջ 19): Կարծում ենք, դրանով անվանի գիտնականը տուրք է տվել երկու Ստեփանոս Սյունեցիների երկերի միավորման ավանդությին:

<sup>64</sup> Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 176:

<sup>65</sup> «Էջմիածին», 1973, Բ, էջ 39:

բոլոր ուսումնասիրողները (այդ թվում նաև Ստեփանոս Սյունեցիներին տարածատած Ն. Թահմիզյանը) օրիներգերի կանոնի ներմուծումը վերագրել են Երկրորդ Ստեփանոս Սյունեցուն: Սակայն, եթե 5-րդ դարում հայկական Սահմոսարանն արդեն բաժանված էր կանոնների<sup>66</sup>, ինչպես կարող էր նրա հետևողամբ ստեղծված օրիներգերի ժողովածուն կանոնակարգվել շուրջ 300 տարի հետո, Երկրորդ Ստեփանոս Սյունեցու ձեռքով: Նշենք ևս կարևոր մի հանգամանք: Ստեփանոս Օրբելյանը, որին հայտնի է եղել միայն 8-րդ դարում ապրած Ստեփանոս Սյունեցին, որին և վերագրել է 5-րդ դարում ապրած համանուն գործչի աշխատանքները, վկայել է, որ օրիներգերի կանոնակարգողը և Հարության Օրինությունների հեղինակը նույն անձն են: «Բաժանեաց եւ զութն ձայնան եւ կարգեաց, շարեաց զՅարութեան Օրինութիւնսն. երգեաց եւ կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ զստղոգին Յինանց եօթն (Ճիշտը՝ ութն – Հ. Բ.) եղանակօք յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն, որ յաղուհացն երգի»<sup>67</sup>: Այստեղից բխում է, որ օրիներգերը կանոնակարգողը Առաջին Ստեփանոս Սյունեցին է, քանի որ նա է Հարության Օրինությունների հեղինակը՝ ըստ շարակնոցային ցանկի և Ն. Թահմիզյանի ապացուցմամբ:

Մանդակունին ևս, ինչպես նշենք, Շաջու երգերով համարել է Հարության կարգը: Բացի այդ, նա հեղինակել է օրիներգերի մի քանի կարգեր՝ նվիրված այն տոներին, որոնց չի անդրադարձել Խորենացին, կամ որոնք սահմանվել են Մանդակունու կաթողիկոսության օրոք: Խոսքը վերաբերում է Առաքյալների, Մարգարենների, Վարդապետների (Սուրբ Մեսրոպի կամ Թարգմանչաց), Սուրբ Տապանակի (Ծեղենցու) և Հովհաննես Մկրտչի նշխարների տոներին: Առաջին երեք տոներին նվիրված օրիներգերը վերագրվել են թե՛ Մանդակունուն և թե՛ Խորենացուն ու Շիրակացուն<sup>68</sup>: Սուրբ Տապանակի կանոնը «զօրինակ ինչ ընծայի

<sup>66</sup> Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 119 և համար.

<sup>67</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Առանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 138–139:

<sup>68</sup> Տե՛ս «Տարական», էջ Ա: Ա. Ամասումին, Նշված աշխատ., էջ 138–139; Գ. Աւետիքեան, Բացասրութիւն, էջ 138: Ըստ Ավետիքյանի, Թարգմանչաց կանոնը հեղինակել է Վարդան Վարդապետը (էջ 548): Մինչեւ վերջին այդ կանոնի միայն Օրինությունների հեղինակն է:

Յոհաննու Մանդակունոյ»<sup>69</sup>: Հովհաննես Մկրտչի նշխարների տոմին նվիրված երգերը վերագրվել են թէ՝ Մանդակունուն և թէ՝ Խորենացուն<sup>70</sup>: Նկատի ունենալով այս ամենը և այլ տվյալներ, Ն. Թահիմիզյանը եզրակացրել է, որ Մանդակունին հեղինակել է «Հինանց («Գովեա») կոչված երգեր, Թարգմանչաց կանոնի երգերը (բացի Օրինությունից), Հովհաննես Մկրտչի նշխարների տոմին նվիրված կանոնի երգերը, Տիրոջ Տապանակի կանոնի երգերը և առաքյալներին նվիրված հնագույն շարականները»<sup>71</sup>: Բոլոր այս, ինչպես նաև Մարգարեների կանոնի հին երգերը, մենք որոշ վերապահումներով համարում ենք Հովհան Մանդակունու ստեղծագործությունը:

\* \* \*

Այժմ մի փոքր ավելի մանրամասն անդրադառնանք Ստեփանոս Սյունեցու (Ա.) և Հովհան Մանդակունու օրիներգերին:

Ստեփանոս Սյունեցին իր հեղինակած Հարության Օրինությունները ըստ հայկական ձայնեղանակների բաժանել է ութ շարքերի՝ յուրաքանչյուր շարքում զետեղելով տար երգ: Այդ ութասուն օրիներգերը Սյունեցին «հորինել է՝ Զատկին և առիասարակ բոլոր կիրակիներին (այսինքն՝ Հարությանը խորհրդանշող օրերին) կատարելու դիտավորությամբ»<sup>72</sup>:

Բոլոր ութ շարքերի երգերի սկզբում Սյունեցին նույն հերթականությամբ նշել է այն աստվածաշնչյան տեքստերի սկսվածքները, որոնց հետևողաբար է ստեղծել իր Օրինությունները: Բերենք այդ սկսվածքները՝ աստվածաշնչյան համապատասխան տեքստերի նշումներով:

<sup>69</sup> Գ. Աւետիքեսն, Բացատրութիւն, էջ 453:

<sup>70</sup> Նոյն տեղում, էջ 426:

<sup>71</sup> Ն. Թահիմիզյան, Ներսոս Շնորհալին, էջ 19: Ծարականոցային ցանկում Մանդակունուն է վերագրված Հոհիսիմյանց կանոնի Համբարձին, որի հեղինակը, սակայն, Հովհաննես Սարկավագն է: Մանդակունուն են վերագրվել նաև այլ օրիներգեր, որոնց պատկանելությունը նրա գրչին խիստ երկրպարական կամ անընդունելի է (տե՛ս Բ. Մարգիսեսն, Քննադատութիւն Յոհան Մանդակունոյ, Վեճեսիկ, 1895, էջ 35):

<sup>72</sup> «Էջմիածին», 1973, Բ, էջ 37:

1. **Օրի** – Օրինեցուք զՏէր – Մովսեսի օրինությունը Կարմիր ծովն անցնելոց հետո, Եղիշ, ԺԵ, 1-19:
2. **Նայ** – Նայեցարուք երկինք – Մովսեսի օրինությունը մահից առաջ, Բ Օրինաց, ԼԲ, 1-21:
3. **Հուր** – Զի հուր բորբոքեալ – ճախորդ օրինության շարունակությունը, Բ Օրինաց, ԼԲ, 22-38:
4. **Ման** – Ծանեցարո՞ւք եւ տեսէ՞ք – ճախորդ օրինության վերջին մասը, Բ Օրինաց, ԼԲ, 39-43:
5. **Հաս** – Հաստատեցաւ սիրտ իմ – Սամուելի մայր Աննայի աղոթքը, Ա Թագաւորութեանց, Բ, 1-10:
6. **Գիշ** – Գիշերաց կամսէ հոգի իմ – Եսայի մարգարեի օրինությունը, Եսայի, ԻԶ, 9-21:
7. **Եսա** – Ես ասացի ի վերանալ – Եզեկիայի աղոթքը, Երբ ծանր հիվանդության մեջ էր, Եսայի, ԼԸ, 10-20:
8. **Օրի** – Օրինեցէք զՏէր – Եսայի մարգարեի այլ աղոթքը, Եսայի, ԽԲ, 10-14:
9. **Նեղ** – Ի նեղութեան իմում – Հովհանն մարգարեի աղոթքը կետի որովանում, Յովհան, Բ, 3-10:
10. **Տրլ** – ՏԷ՛ր, զլուր քո լուալ – Ամբակում մարգարեի աղոթքը, Ամբակում, Գ:

Ստեփանոս Սյունեցու հեղինակած շարքը, ըստ Էության, Քրիստոսի Հարությանը նվիրված ութամաս և 80 երգերից բաղկացած փառաբանական-աղերսական ստեղծագործություն է, պայմանականորեն ասած՝ քնարական պուեմ: Այն գտնվելով հանդերձ Աստվածաշնչի և ճախորդ օրիներգուների լեզվատնական ու պատկերավորման ոլորտում իր որոշ անհատական հնչերանգով լրացնում է Խորենացու հորինած Հարության Հարցմերը և Մեծացուցէները:

Հատկանշական է, որ Սյունեցու օրիներգություններից յուրաքանչյուրի (ողոշ բացառությամբ) առաջին երկու (կամ երեք) տներում առանցքը հարություն առած Քրիստոսն է, իսկ վերջին տունը Մեծացուցէի դեր է կատարում, պահնքն՝ նվիրված է Աստվածամորը: Բերենք պատահական օրինակ.

Հաստատեցան սիրտը մեր առ Քեզ, փառաց Թագաւոր,  
որ ի յերկշից խոնարհնալ՝ իշեր փրկել զարարածը:

Պահեա՝ բզմեա ճրշանաւ յաղթող Խաչի Քո, Թրիստոն՝,  
յոր բարձրացար կամաւ Հօր, բարձեր զանէծն Աղամայ:

Որ զմախամօրն զյանցանս լուծեր ծընթանեամք Քո, Սուրբ  
Կոյս,  
բարեխօսեա՝ անդադար վասրա մերոյ փրկութեան:

Ստեփանոս Սյունեցու Օրինությունների կազմությունը, ինչ-  
պես գրում է Գ. Ավետիքյանը, «յայտնաբարբար վկայ է մեծի  
հմտութեան և ճարտարութեան յօրինողին, այլեւ չերմեռանդն  
պարապման նորա ի հոգեւոր իմաստու: Զխորհրդական միտս  
մարգարէական օրինութեանցն գեղեցկապէս բացայատչ...»<sup>73</sup>:  
Հարության Օրինությունները չափազանց բարձր է գնահատել  
նաև Ղ. Ալիշանը<sup>74</sup>: Այդ երգերը, ըստ Ն. Թահմիզյանի, «շփման  
ընդհանուր եզրեր ունեն Սահակ-Մերոպյան շարականների՝  
հետսամուտ փոփխություններից գերծ մնացած մասի հետ»: Իսկ  
բուն այդ Օրինությունների «ամբողջությունը հայկական Շարակ-  
նոցի հնագույն շերտերը գոյացնող այն եզակի հյութերից է, որոնց  
վրա ժամանակը մերգործել է նվազագույն չափով»<sup>75</sup>:

Այդպիսին են նաև Մարտիրոսաց Հարցները, որոնք իրենց  
պարզությամք հանդերձ հյուտաված են բավական ճարտարորեն և  
կրում են նույն բանաստեղծական անհատականության կնիքը:

Սյունեցին պանծացրել է քրիստոնեական հավատի համար  
տանջանքներ կրած և նահատակված բոլոր սրբերին՝ առանց կոն-  
կրետացման<sup>76</sup>: Որոշ կոնկրետացում կա միայն սուրբ հայրապետ-  
ների (Եկեղեցու Հայրերի) պարագայում, որոնց սույն կարգում  
ձնված են յոթ երգեր<sup>77</sup>: Այստեղ «քաջ եւ յաղթող» երանելի հայ-

<sup>73</sup> Գ. Ալենիքեամ, Բացասրութիմ, էջ 672:

<sup>74</sup>Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 128:

<sup>75</sup> «Էջմիածն», 1973, Բ, էջ 36-37:

<sup>76</sup> Հետսամուտ են այն երկու օրիներգերը, որոնցից մեկը նվիրված է  
Սուրբ Սարգսին, մյուսը՝ Սուրբ Գևորգին: Այդ երգերի հեղինակը Ներսես  
Շնորհալին է:

<sup>77</sup> Հետագայում ստեղծվել են Սուրբ Հայրապետների առանձին կարգ  
և մի շարք օրիներգեր՝ նվիրված առանձին հայրապետների:

րապետները ներկայացված են իբրև կոապաշտության խավարք փարասողներ, անօրեն, բռնավոր իշխանին (Սատանային) հերթողներ: Դիմելով նրանց՝ օրիներգուն ասել է.

*Երանելի սուրբ հայրապետք,  
որք կամաւ չարչարեցալք,  
յանձն առիք զհամբերութիւն,  
յարժանաւոր յաղօթըս ձեր յիշենչիք զանձինըս մեր:*

*Փոխանակ արեամբռ Տեատրն  
ձեր արիւնդ հեղաւ յերկրի,  
և հուտ անցյ բուրեաց յաշխարհ.  
յարժանաւոր յաղօթըս ձեր յիշենչիք զանձինըս մեր:*

Ինչպես բոլոր մարտիրոսները, սուրբ հայրապետները ևս, ըստ օրիներգուի, դասակից են եղել հրեշտակներին, արժանացել Քրիստոսի անապական փառաց պսակին և «հեղմամբ արեան իրենանց նմանողը եղեն Փըրկողին զինքեան»:

Բոլոր վկաներին օրհներգուն համարել է Աստծո հաղթական զինվորներ, «քաջք ի մարտի», որոնք մարտնչում են անօրեն թշնամու, խրոխտ ու բռնավոր թագավորների դեմ: Նրանք «հրաշափառ ճգնությամբ պատերազմնալք ի յերկրի»՝ «զհանդէս նահատակութեան առ բրոնաւորսն ցուցին և յաղթեցին հաւատով», «եւ կանգնեցին մեզ նշան յաղթող ընդդէմ թշնամույն»: Նրանք փայլում են արեգակի նման, լուավորիչներն են աշխարհի և մարդկային հոգիների, եկեղեցու պարծանքն են, հավատացյալների հույսը, մարդկանց մեղքերի լվացողները, Քրիստոսի խաչակիցները, մոլորյալների առաջնորդները, որոնք մեռան Քրիստոսի հետ և կենդանացան, որոնք իրենց մարմիններն Աստծո համար մաքրեցին իբրև տաճար և Սուրբ Հոգու համար եղան օթևան,

Որք ըզմահու իրենանց կանգնեցին յերկրի աշտարակ հըզօր...

Որք մեծապէս կանգնեցին ըզսին հաւատոյ...

Գեղարվեատական վառ պատկերներով են ներկայացված Քրիստոսի աննկուն վկաները, որոնք «զանտանելի ըզվէրսն ի

յանձն աղին» և ուրախությամբ պարպեսին մահվան բաժակը: Դիմելով նրանց բանաստեղծն աղերսում է բարեխոս լինել Աստծո առաջ և փրկել բոլոր հավատացյալներին, ընդումին և իր ժողովրդին.

*Աղաչաճօք սոցա կեցո՛ ըզմեզ...*

*Սոցիճ աղաչաճօք հաշտեա՛ց ընդ մեզ...*

*Փըրկեա՛ ըզմեզ ի հրոյն յախտեմից...*

*Խաղաղացո՛ ըզկեանըս մեր աղօթիք սոցա  
եւ փըրկեա՛ զմեզ ի նեղչաց մերոց...*

Այստեղ կարելի է ենթադրել, որ ընդհանուր նահատակների շարքում Սյունեցին Ակատի է ունեցել նաև հայ մարտիրոսներին (Սութիասանք, Ուկյանք, Ատոռմանք, Վարդանանք, Ղևոնյանք և այլն): Այդ վկաների հիշատակի օրերը, սակայն, ավելի ուշ են վավերացվել մեր եկեղեցու կողմից, ուստի և նրանց ձոնված օրհներգերը ստեղծվել են հետագա դարերում:

Մարտիրոսաց կարգը, ինչպես Ակատել է Ս. Ամատունին, հյուսված է «Բանդարտ, մեղմօրեն, առանց բարձրաբարբառ աւաշի. ուստի եւ առանց որ եւ է վկայի անուն տալու, Ակարագրում է ընդհանրապէս վկայի անձի՝ ազգի եւ եկեղեցւոյ լուսաւորութեան եւ պայծառութեան համար յատուկ պիրով եւ հաւատով գործ դրած տքնութիւնը, ճգնութիւնը, եւ հետեւապէս նրա բարի եւ օրինակելի կենցաղը, խստակրօնութիւնը եւ նահատակութիւնը»<sup>78</sup>:

Ինչպես Մովսես Խորենացին իր հրաշակերտ օրհներգերի շնորհիվ կոչվել է վեհ Քերթող-Քերթողահայր, այնպէս էլ Ստեփանոս Սյունեցին գրեթե նույնափիսի հմտությամբ հյուսված Հարության Օրինությունների և Մարտիրոսաց երգերի համար կոչվել է երգասաց-Ասողահիկ:

<sup>78</sup> Ս. Ամատունի, Նշված աշխատ., Էջ 42:

\* \* \*

Ծարակնոցում առկա են Սուլը Հարությանն առնչվող վեց Ծաշու երգեր, որոնք նախատեսված են երգելու Հինանց շրջանում՝ Սուլը Զատիկից մինչև Հոգեգալուստն ընկած հիսնօրյակին։ Քանի որ այդ Ծաշուները կցորդվել են «Գովեա՝ Երուսաղէմ» սկսվածքով սաղմոսին, ուստի կոչվել են նաև Գովեայք։ Այդ վեց երգերից առաջին երկուսի հեղինակը Ներսես Շնորհալին է, իսկ հաջորդ չորսին՝ Հովհանն Մանդակումին։ Սակայն, կարծում ենք, որ Մանդակումին հեղինակել է վեց Գովեաներ, որոնցից երկուսը հետագայում փոխարինվել են Շնորհալով երգերով…

Մանդակումու հեղինակած Ծաշուները հարություն առած Քրիստոսի փոքրածավալ օրինաբանություններ են՝ ցնծագին տրամադրությամբ համակված հնչեղ կրկնակավոր տողերով, որոնք վկայում են նաև այս օրիներգուի բանաստեղծական շնորհի մասին։

*Տո՛ք օրհնութիւն Տեառն Աստուծոյ՝  
Յարուցելոյն ի մեռելոց…*

*Տէր՝ ճրգօր զօրութեամբ իւրով,  
Տէր՝ կարող ի պատերազմի.  
Տո՛ք օրհնութիւն Տեառն Աստուծոյ՝  
Յարուցելոյն ի մեռելոց…*

Եկեղեցական օրիներգերի ծիսարանում, անտարակուս, ի սկզբանե տեղ պիտի գտնեին նաև Քրիստոսի առաքյալներին և աստվածաշնչան մարգարեներին նվիրված երգեր։ Ուստի և Մանդակումին կաթողիկոս-օրիներգուն ստեղծել է այդ խոշոր սրբերին ձունված երգեր՝ գովերգելով նրանց հավաքականորեն, բոլոր առաքյալներին և բոլոր մարգարեներին նվիրված երկու կարգերով։ Հետագայում է, որ սահմանվեցին առանձին առաքյալների ու մարգարեների կամ առաքելական ու մարգարեական խմբերի նվիրված տոներ և ստեղծվեցին համապատասխան օրիներգեր։ Հետևաբար, 5-րդ դարում եղել են միայն բոլոր

առաքյալների և բոլոր մարգարեների հիշատակի մեկական տոներ՝<sup>79</sup>:

Օրիներգուն առաքյալներին համարել է իրենց կոչման համար ի ծնե ընտրված, ի սկզբան հաստատված, Աստվածորդու սպասավորներ, բարեկամներ ու վկաներ, Քրիստոսի խաչակիցներ, նրա հետ թագավորածներ, որոնք նաև դատավորներ այսի լինեն Տիրոջ երկրորդ գալստյանը: Նրանք արքայական սեղանի համար մարդկանց որսորդներ են, աշխարհի լուսավորիչներն ու անուշ հոտն են, ընդհանրական եկեղեցու պյուներն են ու ժիր մշակները, հավատացյալների պարծանքի պսակը, աստվածային խորհուրդների վերակացուները (հազարապետները), երկնային արքայության դուռը բացողները... Նրանք

*ըզիսաւար կոսպաշտութեանցը վաճեցին  
և ըզլոյս գիտութեան ընդհանուր երկիր ծաւալեցին...*

Աստվածաշնչյան մարգարեներին Մանդակունին փառաբանել է հիմնականում այն պատճառով, որ նրանք գուշակել և քարոզել են Քրիստոսի մարդեղացումը: Ընդ որում, Աստված ինքն է շնորհել նրանց այդ կանխատեսությունը.

*Ճառագա'յթ անձառ Լուսոյ, անքընելի Տէրութի՛ւմ,  
յառաջագոյն հրաշացուցեր զտեսողութիւն մարգարէիցը ՝  
իշանելով ի ստորինս՝ աստուածային տնօրէնութեամբ:*

Առաքյալները և մարգարեները ևս, որպես սրբեր, ընկալվել են իբրև միջնորդ մարդու և Աստծո միջև և բարեխսո՞ւ վերջինիս առաջ: Ուստի և օրիներգուն դիմել է թե՛ նրանց և թե՛ Տիրոջը անձնական ու անանձնական աղերսանքով.

*Աշակէ՛րոց Քրիստոսի եւ առ ամենայն տիեզերս առաքեա՛յք,  
բարեխսուցէ՛ք առ Տէր վասրը մեր...*

<sup>79</sup> Նոր շրջանում մեր եկեղեցին նոյեմբեր ամսին նշում է «Ամենայն սրբոց» տոնը, որտեղ ընդգրկված են նաև բոլոր առաքյալներն ու մարգարեները:

Ի ձեռքն սըրբոց Քոց առաքելոցըն  
խըմայեա՛, Տէ՛ր, ի յամձինըս մեր...

Որ զգման գերի առեալ՝ մահուամբ զգման կոխեցեր՝  
արձակելով զերամըս մարգարէիցըն յանստուեր Քո հանգիստը.  
սորօք շնորհեա՛ հաստատութիւն Եկեղեցոյ Քում Սըրբոյ:

Խորենացուց հետո Մանդակունին և անդրադարձել է նոր-  
կտակարանային խոշորագույն սուրբ Հովհաննես Մկրտչին՝ հորի-  
նելով երգերի մի շարք՝ նվիրված ճորա նշխարների հիշատակին:  
Օրիներգուն Հովհաննես Մկրտչին համարել է Աստվածորդու թե՛  
մարգարե և թե՛ առաքյալ և խորենացու հետևությամբ կոչել է  
Քրիստոսի նախանշան Արուայակ, այլև՝

Ծրագ ճըշմարտութեան Սուրբ Յովհաննէս Մըկրտիչ,  
որ ծագեցաւ ի յերկրի...

Մեր եկեղեցին, ըստ երևոյթին 5-րդ դարից ի վեր, Վարդա-  
վառի նախորդ շաբաթ օրը նշում է հին Տապանակի և նոր Սուրբ  
Եկեղեցու տոնը: Հին կամ Ուխտի Տապանակը այն նվիրական  
արկղն էր, որը պահպում էին Մովսիսական օրենքների տախտակ-  
ներն՝ ի վկայություն իր ժողովրդի հետ Աստծո հաստատած  
ուխտի, և որը խորհրդանշում է քրիստոնեական եկեղեցու նախա-  
հիմքը: Այս տոնին համար Հովհան Մանդակունին ստեղծել է  
օրիներգերի շարք: Ըստ այդ շարքի Օրինության, Երուսաղեմի  
տաճարից (որի խորանում էր պահպում Ուխտի Տապանակը)  
ծագեց արդար Արեգակ Քրիստոսը: Դիմելով այդ անապական  
տաճարին՝ օրիներգուն ասել է.

Ի քեզ կանգնեալ սեղան սըրբութեան եւ բըղխեալ աղքիր  
անապական,  
որ յորդառաս վըտակօք արրուցանել յաւտ ըզտինզերս՝  
գեղեցկապէս բըղխեալ զրոյրդս անուշից,  
եւ յաւէժ ուրախանան միշտ հաւատացեալք:

Սա քրիստոնեական եկեղեցու թերևս առաջին փառաբանու-  
թյունն է հայ քերթության մեջ...

Մեր եկեղեցին երկու անգամ նշում է Սուլբ Թարգմանչաց տոնը, որ կոչվել է նաև Վարդապետաց: Տոներից մեկը նվիրված է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին (վերջինիս տոնը նշվում է նաև առանձին), մյուսը մեր բոլոր պրացված թարգմանչների տոնն է՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Ներսես Ծնորհալի: Այդ երկրորդ տոնի համար ստեղծվել է շարականների մի ամբողջական կանոն, որի երկու Օրինությունները 13-րդ դարում հեղինակել է Վարդան Վարդապետը, իսկ Հարցնը իր կազմով պատկանում է Հովհան Մանդակունու գրչին: Օրինություններում գովերգովում են բոլոր թարգմանիչ-վարդապետները, իսկ Մանդակունու օրիններգերում միայն Մեսրոպ Մաշտոցը: Սա որոշակիորեն ցույց է տալիս, որ 5-րդ դարում նշվել է միայն Սուլբ Մեսրոպի տոնը, և այդ առթիվ Մանդակունու գրած օրիններգերի կարգը Աերկայացվել է «Կարգ Սրբոյն Մեսրոպայ» խորագրով<sup>80</sup>:

Տեսանք, որ Մովկսես Խորենացին ի դեմս ազգային սրբի՝ Գրիգոր Լուսավորչի, հայ քերթության մեջ առաջին անգամ արծարել է «հայկական թեման»: Հովհան Մանդակունին էլ ազգային մյուս մեծագույն սրբի՝ Մեսրոպ Մաշտոցին նվիրված օրիններգերով շարունակել է այդ թեման:

Մանդակունին Սուլբ Մեսրոպին նախ Աերկայացրել է իբրև համընդիմանուր սրբի, որի միջոցով Աստված ողորմություն է արել մարդկային ցեղին (ազգին մարդկան) և նրա միջոցով լուսավորել ողջ աշխարհը (զոհինեղերս): Մեր օրիններգուն Մաշտոցին համարել է երկրում երևացած հրեշտակ, որն ապրել է «Աստուծոյ հաճոյական» օրինակելի վարքով: Այդ վարքը լավագույնս ներկայացրել է Մաշտոցի աշակերտ Կորյունը, որի գրությանը քաջատեղյակ է եղել Մանդակունին: Նա Սուլբ Մեսրոպին գնահատել է նաև իբրև ազգային գործչի, որն աստվածային շնորհներ է պարգևել հայությանը, որին օրիններգուն կոչում է հյուսիսականներ և Թորգոմի որդիներ: Այդ աստվածային շնորհներից մեծագույնը գրերի գլուխն է, որով Աստված հայ ժողովրդին շնորհել է Սուլբ Հոգու անմարմին խոսքի գրավոր իմաստը՝ «յայտնեալ տեսլեամբ ի ձեռն Սուլբ Վարդապետին»:

<sup>80</sup> Այս առթիվ տե՛ս Վ. Ներսիսյան, «Ծարականոցի» թարգմանչաց կանոնը, «Էջմիածին», 2006, Ժ–ԺԱ, էջ 82 և համար:

Հովհան Մանդակունին, հետևելով Կորյունին<sup>81</sup>, Մաշտոցին համեմատել է աստվածաշնչան Միվանի հետ, որը գրով դրոշմել է աստվածային օրենքները.

*Նըմանեալ Մովսէսի, տէ՛ր Վարդապէտ,  
թէրելով ըզգիր Օրինաց ի Հայաստան աշխարհն,  
որով լուսաւորեցան ազգ որդոց Թորգոնալ:*

Օրիներգերից մեկի վերջին տաճ մեջ Մանդակունին, Ակատի ունենալով Մաշտոցյան դպրոցի բոլոր թարգմանիչ-վարդապետներին, Աստծուն աղերսել է հայության անունից.

*Որ զիտութիւն Քո գերկնային եւ զիոգետոր զիմաստութիւն  
առատապէս ծաւալեցար յեկեղեցին Հայաստանեայց  
ի ձեռքն սըրբոց թարգմանչացըն,  
աղաչանօք սոցա ողորմեա' մեզ, Աստուած:*

Մաշտոցյան փառաբանությունը սկիզբ առնելով Հովհան Մանդակունուց՝ ծավալվեց ողջ միջնադարում և ապա նորովի հնչեց Սիամանթոյի և Պարույր Սևակի շուրթերից...

\* \* \*

Այսպիսով, ուրեմն, Հովհան Մանդակունին Ստեփանոս Սյունեցու հետ միասին ամբողջացրել է Սուրբ Հարության կարգը: Նա օրիներգերի նոր կարգով պանծացրել է Հովհաննես Մկրտչին: Հայ քերթության մեջ առաջինը լինելով՝ օրիներգել է առաջալներին ու մարգարեներին, ինչպես նաև քրիստոնեական եկեղեցուն: Խորենացուց հետո նա օրիներգության մեջ արծարծել է նաև «հայկական թեման» Աերբողելով Մեսրոպ Մաշտոցին, որպես հայ գրերը ստեղծողի, թարգմանչաց պարագլիսի և Հայաստան աշխարհում քրիստոնեական լույսը տարածող Սրբի...

Հովհան Մանդակունին Ստեփանոս Սյունեցու հետ մեկտեղ

<sup>81</sup> Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 101 և համար:

կազմել և կանոնակարգել է օրիներգերի առաջին ժողովածուն: Ստորև բերում ենք այդ ժողովածուի բովանդակությունը՝ նշելով օրիներգերի հերթական կարգերը՝ իրենց նախնական խորագրերով և հեղինակների անուններով (հիշեցնենք, որ այդ կարգերում առկա երգերը հետագայում համալրվել են որոշ հայտնի և անհայտ հեղինակների կողմից):

- Կարգ Աւետեաց Սուրբ Աստուածածնին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Աստուածայայտնութեան ճրագալուցին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Աստուածայպտնութեան – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
(բոլոր ութ օրերի կարգերը)
- Կարգ Տեսանընդառաջին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Անտոնի Անապատականին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Թէոդոսի քագաւորին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Առաքելոց – ՀՈՎՀԱՆՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**  
**Կարգ ապաշխարութեան – ՄԵՍՐՈՊ ՄԱԾՏՈՅ**  
(ութ շարք Հարցներ)  
**Կարգ յարութեան Ղազարու – ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ**  
**Կարգ Շաղկազարդին – ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ**  
**Կարգ Մեծի շաբաթուն – ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ**  
(բոլոր յոթ օրերի կարգերը)
- Կարգ Սրբոյ Ճարութեան**  
Օրինութիւնք – ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ  
Հարցնք (ութ շարք) – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ  
**Մեծացուցէք – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Ժաշութ եւ Գովեազք Յինանցն – ՀՈՎՀԱՆՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**  
**Կարգ գլխատման Յովիաննու Մկրտչին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ երկրորդ Շաղկազարդին – ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ**  
**Կարգ Հոգեգալստեան – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Յովիաննու Մկրտչին – ՀՈՎՀԱՆՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**  
**Կարգ Սրբոյ Գրիգորի Լուսաւորչին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Սրբոյ Տապանակին – ՀՈՎՀԱՆՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**  
**Կարգ Վարդապահին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Վերափոխման Սուրբ Աստուածածնին – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**  
**Կարգ Սրբոց Մարգարէից – ՀՈՎՀԱՆՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**  
**Կարգ Սրբոյն Մեսրոպի – ՀՈՎՀԱՆՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**  
**Կարգ Մարտիրոսաց – ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ**

## ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Ինչպես տեսնում ենք, 5-րդ դարում արդեռ կազմվել է եկեղեցական գրեթե բոլոր ճշանավոր սովորին ու սրբերի հիշատակներին ձունված օրհներգերի ամբողջական կանոնակարգված առաջին ժողովածում՝ Կցուրդարանը, Ծարակնոցի նախօրինակը, որը մինչև 15-րդ դարը պիտի համալրվեր բազմաթիվ նորանոր կարգերով ու երգերով՝ դառնալով հայ հոգևոր երգի հարուստ շտեմարաններից մեկը:

*Հենրիկ ԲԱԽՉԻՆՅԱՆ*